ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՏԵՂԵԿԱԳԻՐ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР
Հասարակական գիտություններ № 1, 1956 Общественные науки

Վ. Պարսամյան

ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ*
(1830—1850 ԹԹ.)

ԱՐԵՎԵԼՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԸ ՌՈՒՍԱԿԱՆ ԿԱՅՍՐՈՒԹՅԱՆ ԿԱԶՄՈՒՄ

1. ՎԱՐՉԱԿԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

Երևանի ժամանակավոր վարչությունը:— *Երևանը գրավելուց հինգ օր հետո, 1827 թ. հոկտեմբերի 6-ին, տապալված խանական իշխանության փոխարեն, Պասկևիչի հրամանով Երևանում կազմվում է ժամանակավոր վարչություն։ Վարչության պետ է նշանակվում տեղի զորքերի հրամանատար գեներալ Կրասովսկին, իսկ անդամներ՝ Երևանի բերդի պարետ, փոխգնդապետ Հորոդինը և Ներսես Աշտարակեցին։*

Ժամանակավոր վարչությանը հանձնարարված էր.

Տապալված խանական իշխանության փոխարեն իշխանությունը վերցնել իր ձեռքը և կարգ ու կանոն հաստատել երկրում։ Տեռական միջոցներով ապահովել զորքի մատակարարումը, հոգ տանել երկրի պաշտպանության և Երևանի, Սարդարաբադի ու Աբբասաբադի բերդերի կայազորների մասին։ Ապահովել հաղորդակցությունը և առևտուրը Վրաստանի հետ, հաշվի առնել և պետականացնել սարդարի ունեցվածքը։

Երևանի ժամանակավոր վարչությունը կազմակերպվել էր պատերազմի ժամանակ և գերազանցապես կոչված էր ծառայելու պատերազմը հաղթանակով ավարտելու գործին։ Դա ոչ թե քաղաքացիական, այլ ըստ էության ռազմավարչական իշխանության մի օրգան էր։ Թուրքմենչայի պայմանագրից հետո, երբ դադարել էին պատերազմական գործողությունները և կյանքը մտել էր խաղաղ զարգացման հունի մեջ, բնական է, ժամանակավոր վարչությունը պետք է տեղի տար իշխանության մի նոր ու ավելի համապատասխան օրգանի։ Ժամանակավոր վարչությունը գոյություն ունեցավ մոտ վեց ամիս։

Հայ հայրենասերների նախագիծը:— *Արևելյան Հայաստանը Ռուսաստանին միացնելու ժամանակ, ցարական կառավարությանը, ինչպես և հայ հասարակական-քաղաքական գործիչներին զբաղեցնում էր նաև այն հարցը, թե ինչպիսի՞ վարչական կարգեր պետք է ստեղծել երկրում՝ տապալված խանական իշխանության փոխարեն։ Նիկոլայ 1-ի հանձնարարությամբ Պետերբուրգում ստեղծվել էր հատուկ հանձնաժողով, որն զբաղվում էր այդ հարցով։*

Հենց այդ շրջանում էր, որ մի խումբ հայ գործիչներ, որոնք իրենց անվանում էին «հայ պատրիոտներ», հանդես են գալիս Հայաստանի ավտոնոմիա ստեղծելու ծրագրով։

Հետևելով Եկատերինա 2-րդի ժամանակ Հայաստանի ավտոնոմիայի վերաբերյալ կազմված հայանի նախագծի օրինակին, այդ հայ գործիչները

* *Տպագրում ենք «Հայ ժողովրդի պատմության» ձեռնարկի երկրորդ հատորից մի բաժին և խնդրում ընթերցողներին իրենց դիտողություններն ուղարկել խմբագրության։ Խմբ.*

(Խ. Լազարյան, Ա. Խուդաբաշյան, Կ. Արզումյան Երկայնաբազուկ և ուրիշներ) 1827 թ. վերջերին, Պետերբուրգում, մի նախագիծ են կազմում և ներկայացնում կառավարությանը։

Ըստ այդ նախագծի՝ Հայաստանում պետք է հիմնվեր ավտոնոմ իշխանություն՝ Ռուսաստանի հովանավորության տակ։ Երկրի պաշտպանության համար, կամավոր հիմունքներով, պետք է կազմվեր հայկական գվարդիա կամ էսկադրոն։ Հայկական գվարդիայի զինվորներն ու սպաները պետք է ազատ լինեին ճնշումներից և արտոնություններ ունենային։ «Որքան քիչ լինի ճնշումը,— ասված է այդ նախագծում,— որքան ազատ լինի ծառայությունը, որքան շատ լինեն արտոնությունները, այքան ավելի կաճի ցանկացողների թիվը»։

Մոսկվայի Լազարյան ճեմարանը և Թիֆլիսի Ներսիսյան դպրոցը պետք է զինվորական և քաղաքացիական աշխատողների կրթված կադրեր պատրաստեին հայկական ավտոնոմ իշխանության համար։

Շատ ուշագրավ են նախագծի այն կետերը, որոնք վերաբերում են երկրի ներքին կյանքին, բնակիչների իրավունքներին ու պարտականություններին։ Այդտեղ պահանջվում էր՝

«Որպեսզի բնակիչներից յուրաքանչյուրի իրավունքներն ու պարտականությունները միշտ պաշտպանված լինեն արդարության և օրենքների վրա հիմնված կայուն կանոններով ... Յուրաքանչյուրի ու բոլորի սեփականությունը պաշտպանվի։

Որպեսզի կալվածատերերի իրավունքները տարածվեն միայն այն հողերի և անշարժ գույքերի վրա, որոնք ակտերով ու օրենքներով պատկանում են նրանց։

Ճորտատիրական իրավունքի մեջ պարզություն մտցվի...։ Քանի որ ճորտատիրական իրավունքի գոյությունից Վրաստանում բազմաթիվ չարագործություններ են ծագում, տեղի են ունենում անվերջ պրոցեսներ, կապված աղքատ դասակարգի մարդկանց քայքայման հետ... Շատ անկարգություններ և շատ չարիքներ են առաջանում. անհրաժեշտ է սահմանափակել կամ ոչնչացնել ճորտատիրական իրավունքը Վրաստանում և կամ առնվազն սահմանել, որպեսզի ոչ ոք չկարողանա անհատապես վաճառել ընտանիքի այն անդամներին, որոնք ամրացված են հողին, և ոչ թե անձին, և առհասարակ արգելվի մարդկանց վաճառքը, նրանց այլ նահանգներ ու այլ տեղեր փոխադրելը կամ գաղթեցնելը»։

Նախագծի հեղինակների պահանջը ճորտատիրական իրավունքի սահմանափակման կամ ոչնչացման վերաբերյալ՝ իր ժամանակի համար առաջադիմական պահանջ էր և հազիվ թե կարելի լինի տարակուսել, որ դա կապված էր Ռուսաստանում աճող հակաճորտատիրական շարժման հետ։

Ինչ ընթացք ունեցավ այդ նախագիծը։ Լազարյաններն այն ներկայացրին կառավարությանը, բայց հավանություն չգտավ և մնաց անիրագործելի։

Ոգևորված Պետրոս 1-ինի, Եկատերինա 2-րդի և նրանց հաջորդների ժամանակ ցարական կառավարության տված խոստումներով, հայ հայրենասերները կարծում էին, թե Հայաստանը գրավելուց հետո, վերջապես իրենց կհաջողվի հայկական ավտոնոմ իշխանություն ստեղծել։ Նրանց քաղաքական կարճատեսությունը և սահմանափակվածությունը թույլ չէին տալիս թեկուզ հենց հարևան Վրաստանի փորձից եզրակացություններ անելու և տեսնելու, որ նի-

կոլայան ռեժիմի պայմաններում երբեք հնարավոր չէր Հայաստանում ավտոնոմ իշխանություն ստեղծել։

Հայկական մարզի կազմակերպումը.— Թուրքմենչայի պայմանագրով, ինչպես տեսանք, Երևանի ու Նախիջևանի նախկին խանությունները և Օրդուբադի շրջանը միացվեցին Ռուսաստանին։ 1828 թ. մարտի 20-ին Նիկոլայ I-ինը վավերացնում է այդ պայմանագիրը, իսկ մարտի 21-ին ստորագրում Հայկական մարզ կազմելու հետևյալ հրամանագիրը.

«Պարսկաստանի հետ կնքված դաշնագրի համաձայն, հրամայում եմ Պարսկաստանից Ռուսաստանին միացված Երևանի և Նախիջևանի խանություններն այսուհետև բոլոր գործերում անվանել Հայկական մարզ և այն մտցնել մեր տիտղոսի մեջ»։

Այս հրամանագրի հիման վրա Պասկևիչն արձակում է Երևանի ժամանակավոր վարչությունը և փոխարենը կազմում Հայկական մարզի վարչություն (կենտրոնը՝ Երևան)։ Մարզային վարչության պետ է նշանակվում տեղի զորքերի հրամանատար գեներալ-մայոր Ալեքսանդր Ճավճավաձեն, իսկ անդամներ՝ երկու ռուս զինվորականներ և մեկ հայ, մեկ մահմեդական՝ տեղական իշխող դասի ներկայացուցիչներից։

Հայկական մարզը բաժանվում է երկու գավառի (Երևան և Նախիջևան) և մեկ օկրուգի (Օրդուբադ)։ Գավառներն իրենց հերթին բաժանվում են շրջանների (մահալների), իսկ շրջանները՝ գյուղերի։

Երևանի ու Նախիջևանի գավառներում հիմնվում են ոստիկանական վարչություններ և գավառական դատարաններ։

Նախիջևանում և Օրդուբադում տեղական իշխանությունը Պասկևիչը թողնում է նախկին կառավարիչներին (նայիբներին), որոնք պատերազմի ժամանակ օգնել էին ռուս զորքին։ Նրանց որպես օգնականներ նշանակում են ռուս սպաներ։ Քոչվոր ցեղերը (քրդեր, թաթարներ) թողնվում են իրենց ցեղապետների իշխանության տակ։

Շրջանների և գյուղերի կառավարչությունը թողնվում է նախկին պաշտոնյաներին՝ միրբոլուքներին, մելիքներին և աղալարներին։

1830-ական թթ. վարչական փոփոխությունները Հայկական մարզում։— 19-րդ դարի առաջին երեք տասնամյակներում զբաղված լինելով Իրանի ու Թյուրքիայի դեմ մղվող պատերազմներով, ցարական կառավարությունը հնարավորություն չուներ լուրջ փոփոխություններ մտցնելու Անդրկովկասի ներքին կյանքում։ Նրա ամբողջ ուշադրությունը բևեռված էր արտաքին ֆրոնտի, թշնամու դեմ հաղթանակ տանելու գործի վրա։

Իրանի և Թյուրքիայի դեմ տարած հաղթանակներից հետո, երբ Անդրկովկասում կյանքը մտնում էր խաղաղ զարգացման շրջանը, ցարական կառավարությունն իր ուշադրությունը կենտրոնացնում էր Անդրկովկասի ներքին կյանքի հարցերի, առաջին հերթին կենտրոնացված ուժեղ վարչական ապարատ ստեղծելու վրա։

Մինչ այդ, ոչ միայն Հայաստանում, այլև շուրջ մի քառորդ դար առաջ Ռուսաստանին միացված Վրաստանում և Ադրբեջանում կայուն վարչաձևեր ու օրենքներ չէին հաստատվել։ Չէր կարելի Անդրկովկասում կենտրոնացած ուժեղ ռեժիմ ստեղծել, առանց վերացնելու վարչաձևերի ու օրենքների այն քաոսը, որը մինչ այդ գոյություն ուներ։ Ահա թե ինչու պատերազմից անմիջապես հետո, ցարական կառավարությունը ձեռնամուխ եղավ Անդրկովկասում վարչա-

կան ռեֆորմներ անցկացնելուն։ Անդրկովկասի վարչական ռեֆորմները կապված էին նաև ցարիզմի տնտեսական քաղաքականության հետ։

Անդրկովկասի վարչական ռեֆորմների կապակցությամբ կառավարական շրջաններում երևան եկան տարբեր ծրագրեր, տարբեր մոտեցումներ։ Այսպես, օրինակ, Պասկևիչն առաջարկում էր ամբողջ Անդրկովկասում միանգամից ռուսական վարչաձև և օրենքներ մտցնել։ Սենատորներ Մեչնիկովը, Կուտայիսովը և Գանը պաշտպանում էին Պասկևիչի առաջարկը։ Դրան հակառակ, Պասկևիչի հաջորդը՝ բարոն Ռոզենը, գտնում էր, որ քաղաքական տեսակետից ճիշտ չէր լինի միանգամից վերացնել դարերով արմատացած տեղական կարգերն ու սովորությունները։ Դա պետք էր անել աստիճանաբար, աննկատելի կերպով։ Կառավարական շրջաններում կային մարդիկ, որոնք պաշտպանում էին Ռոզենի առաջարկը։ Այդ պատճառով էլ հարցի լուծումը ձգձգվում է, այն ուղարկվում նոր ուսումնասիրության, նոր քննության։ Եվ մինչև այդ հարցը Անդրկովկասի մասշտաբով կլուծվեր, Հայկական մարզի վարչական կյանքում տեղի ունեցան մի շարք փոփոխություններ։

1829—1830 թթ. Պասկևիչը Հայկական մարզ քաղաքացիական աշխատանքի է ուղարկում մի շարք ռուս զինվորական պաշտոնյաների։ 1830 թ. փետրվարին մարզային վարչության պետ է նշանակվում գեներալ-մայոր Վ. Բեհրութովը։ Բեհրութովի ժամանակ (1830—1838 թթ.) ղգալի չափով ամրապնդվում են ցարական-վարչական կարգերը և աստիճանաբար դուրս են մղվում, խանական կարգերի մնացորդները։

Հայկական մարզի վարչական կառուցվածքի մեջ նկատելի փոփոխություններ են մտցվում 1833 թ. հունիսի 23-ի օրենքով։ Այդ օրենքի համաձայն՝ վերացվում է մարզային վարչության կոլեգիալ ձևը, և ավելի լայն իրավունքներ են տրվում վարչության պետին։ Ոստիկանական, դատական և ֆինանսական-տնտեսական գործը գլխավորող նախկին խորհրդականների փոխարեն հիմնվում են հատուկ բաժիններ։ Կազմվում է հարկերի ու տուրքերի գանձման առանձին վարչություն։ Հարկերն ու տուրքերը լրիվ գանձելու, պետական եկամտի նոր աղբյուրներ հայտնաբերելու գործը հանձնարարվում է առանձին կոմիսարի։

Երևանի գավառը բաժանվում է չորս օկրուգի՝ Երևանի, Շարուրի, Սարդարապատի և Սուրմալուի։ Օկրուգների պետեր են նշանակվում ռուս չինովնիկներ։ Նախիջևանը և Օրդուբադը մնում են նախկին նայիբների ձեռքում։ Երևանում և Նախիջևանում ռուս չինովնիկների գլխավորությամբ շարունակում են գործել գավառական դատարանները։ Տեղական բնակիչներին իրավունք է վերապահվում դիմելու նաև մեդիատորական (միջնորդ) դատարանին և շարիաթին։

1833 թ. հունիսի 23-ի օրենքը մի նոր քայլ էր Հայկական մարզի վարչական ապարատի ամրապնդման և ռուսականացման ուղղությամբ։ Բայց այդ օրենքը գործադրվում էր ժամանակավորապես, մինչև Անդրկովկասի վարչական ռեֆորմների հարցի լուծումը։

1836 թ. Եկեղեցական կանոնադրությունը։— Հայկական մարզի վարչական ռեֆորմների հետ միաժամանակ ցարական կառավարությունը ձեռնամուխ է լինում վերակազմելու նաև հայ եկեղեցական վարչությունը։

Հայ հոգևորականությունը, նրա պետերը, վաղ ժամանակներից սկսած, մանավանդ հայկական պետության անկումից հետո, ակտիվ կերպով մասնակ-

ցում էին երկրի ներքին և արտաքին գործերին։ Օգտվելով, մի կողմից՝ ազգային պետության բացակայությունից, մյուս կողմից՝ Թյուրքիայի և Իրանի տնտեսական, քաղաքական ու կրոնական ճնշումներից, հայ հոգևորականությունը մեծ ազդեցություն էր ձեռք բերել ժողովրդի վրա և փաստորեն իր ձեռքում կենտրոնացրել նաև քաղաքական գործերի ղեկավարությունը։

Ձեռնամուխ լինելով Հայկական մարզի վարչական ապարատի կազմակերպման ու ամրապնդման գործին, բնական է, ցարական կառավարությունը չէր կարող թույլ տալ, որ հայ հոգևորականությունը խառնվեր պետական իշխանության ֆունկցիաներին և չսահմանագծեր նրա իրավունքներն ու պարտականությունները։ Այդ նպատակով դեռևս 1830 թվականին Թիֆլիսում, իսկ այնուհետև Պետերբուրգում հիմնված գաղտնի կոմիտեների կատարած ուսումնասիրությունների հիման վրա, մշակվում և 1836 թ. մարտի 11-ին ընդունվում է մի կանոնադրություն (ռուսերեն Պոլոժենիե), որտեղ սահմանվում են հայ եկեղեցական վարչության իրավունքներն ու պարտականությունները։

1836 թ. կանոնադրությունը արգելում էր հայ հոգևորականությանը խառնվելու պետական իշխանության ֆունկցիաներին, սահմանափակում էր նրա քաղաքական իրավունքները։ Կառավարության հսկողության տակ պահպանվում էին էջմիածնի կաթողիկոսի իրավունքները Ռուսաստանի սահմաններում և այդ սահմաններից դուրս գտնվող ամբողջ հայության նկատմամբ։ Օրինականացվում և ամրապնդվում էին էջմիածնի և մյուս վանքերի հողատիրական ու կալվածատիրական իրավունքները։ Հայկական դպրոցների և կուլտուր-լուսավորական այլ հաստատությունների, ինչպես և ամուսնական, ծննդյան ու թաղման գործերի տնօրինությունը հանձնվում էր հոգևոր իշխանություններին։

1836 թ. կանոնադրությունը մի միջոց էր ցարական կառավարության և հայ հոգևորականության դաշինքը ամրապնդելու, հայ ժողովրդի վրա իշխելու համար։

Հայկական մարզի վերացումը և Երևանի նահանգի կազմակերպումը։— 1830-ական թվականներին կատարված նոր ուսումնասիրություններից հետո, սենատոր Գանի ներկայացրած նախագծի հիման վրա, հրատարակվում է 1840 թ. ապրիլի 10-ի օրենքը, որի համաձայն Անդրկովկասը ենթարկվում է վարչական նոր բաժանման։ Կազմվում է Վրացա-իմերեթական նահանգը, կենտրոնը՝ Թիֆլիս և Կասպիական մարզը, կենտրոնը՝ Շամախի։

Հայկական մարզը որպես առանձին վարչական միավոր վերացվում է։ Երևանի ու Նախիջևանի գավառները, Օրգուբադի օկրուգը և նոր կազմված Ալեքսանդրոպոլի գավառը մտցվում են Վրացա-իմերեթական նահանգի մեջ։

1840 թ. ապրիլի 10-ի օրենքը անտեսում էր Անդրկովկասի ժողովուրդների սոցիալ-տնտեսական և ազգային կուլտուրական կյանքի առանձնահատկությունները։ Այդ պատճառով էլ մասսայական դժգոհություններ ու բողոքներ առաջացան տեղական ժողովուրդների մեջ։ Ցարական կառավարությունը վախեցած ժողովրդական հուզումներից, հարկադրված եղավ զիջումներ անել և որոշ փոփոխություններ մտցնել ապրիլի 10-ի օրենքի մեջ։

1844 թվականին Կովկասում հիմնվում է փոխարքայություն։ Կովկասի փոխարքա է նշանակվում փորձված բյուրոկրատ Մ. Ս. Վորոնցովը։

Հաշվի առնելով Անդրկովկասում ստեղծված լարված դրությունը, Վորոնցովը զգույշ և խորամանկ քաղաքականություն է վարում, քողարկելով իր իսկական դեմքը։ 1840 թ. ապրիլի 10-ի օրենքով սահմանված միօրինակ վարչաձևի

փոխարեն, Անդրկովկասի տարբեր մասերում մտցվում են տարբեր վարչաձևեր։ Հայաստանում, Վրաստանում և Ադրբեջանի առանձին շրջաններում հիմնվում են քաղաքացիական վարչություններ, Օսեթիայում, Գուրիայում, Ջարոբելոկանիում և մի շարք այլ շրջաններում՝ ռազմա-քաղաքացիական խառը վարչություններ, իսկ լեռնականների մոտ՝ ռազմական վարչություններ։

1846 թ. դեկտեմբերի 14-ի օրենքով Անդրկովկասում վարչական նոր փոփոխություններ են մտցվում։ Վրացա-իմերեթական նահանգի և Կասպիական մարզի փոխարեն կազմվում է չորս նահանգ՝ Թիֆլիսի, Քութայիսի, Շամախու և Դերբենտի։ Երևանի, Ալեքսանդրոպոլի և Նախիջևանի գավառները մտցվում են Թիֆլիսի նահանգի մեջ։

1849 թ. հունիսի 9-ի հրամանագրով կազմվում է Երևանի նահանգը, որի մեջ մտնում են Երևանի, Ալեքսանդրոպոլի, Նախիջևանի, Նոր Բայազետի և Օրդուբադի գավառները։ Վարչական այս բաժանումը հիմնականում պահպանվում է մինչև ցարիզմի անկումը։

1830—1840 թթ. կիրառած իր վարչական ռեֆորմների շնորհիվ ցարական կառավարությունը կարողացավ զգալի չափով ամրապնդել Անդրկովկասի վարչական ապարատը։ Դաշն կնքելով կալվածատերերի և զարգացող բուրժուազիայի հետ, ցարական կառավարությունը հետզհետե խստացրեց իր ազգային-գաղութային ճնշումը տեղական ժողովուրդների նկատմամբ։ Չնայած դրան, այդ ռեֆորմները օբյեկտիվորեն նպաստեցին երկրի տնտեսական և հասարակական կյանքի հետագա զարգացմանը։

2. ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Գյուղատնտեսություն։— Երկար ժամանակ գտնվելով հետամնաց ասիական բռնապետությունների՝ Թյուրքիայի ու Իրանի տնտեսական լճացման ու դեգրադացիայի պայմաններում, Հայաստանի էկոնոմիկան, առանձնապես գյուղատնտեսությունը, մնացել էր զարգացման չափազանց ցածր մակարդակի վրա։

Ռուսաստանի հետ միանալուց հետո Հայաստանի էկոնոմիկան ազատագրվեց այդ կապանքներից և բոնեց զարգացման ուղին։ Ժողովուրդը շունչ քաշեց ավերիչ պատերազմներից, խաների միջև հաճախակի տեղի ունեցող ներքին կռիվներից և նրանց կամայականություններից ու բռնություններից։ Գյուղացիները հնարավորություն ստացան ձեռնամուխ լինելու խաղաղ աշխատանքի, մշակել ամայացած դաշտերն ու այգիները։

Ազգաբնակչության ճնշող մեծամասնությունը ապրում էր գյուղում և զբաղվում հողագործությամբ, այգեգործությամբ ու անասնապահությամբ։ Գյուղացիները մշակում էին ցորեն, գարի, հաճար, բրինձ, բամբակ, ծխախոտ և այլն։ Ռուսաստանին միանալուց հետո, Լոռի-Փամբակի, Դիլիջանի և Իջևանի շրջաններում զարկ տրվեց նաև կարտոֆիլի ու կաղամբի մշակությանը, որը հետագայում տարածվեց ամբողջ Հայաստանում։

Դաշտային ու նախալեռնային շրջաններում գյուղերի ու քաղաքների բնակչության մի զգալի մասը զբաղվում էր այգեգործությամբ։ Առանձնապես հայտնի էր Հայկական մարզի խաղողը, որից ընտիր գինի և օղի էին պատրաստում։

Գյուղատնտեսության կարևոր ճյուղերից մեկն էլ անասնապահությունն էր։ Գյուղացիները պահում էին եզներ, կովեր, գոմեշներ, ոչխարներ, ձիեր և ուղ-

տեր։ Գյուղատնտեսության այս հիմնական ճյուղերից բացի, առանձին շրջաններում զբաղվում էին նաև շերամապահությամբ, թռչնաբուծությամբ, մեղվաբուծությամբ և ձկնորսությամբ։

Գյուղատնտեսության զարգացման ընդհանուր մակարդակը շատ ցածր էր։ Հողը մշակվում էր եռադաշտային սիստեմով, նահապետական պրիմիտիվ գործիքներով. ցածր էր նաև աշխատանքի արտադրողականությունը։ Գյուղացիները ամբողջ տարին աշխատում էին, բայց աղքատ ու չարքաշ կյանք վարում։

Արհեստներ։— Հայաստանի բնակչության մի զգալի մասն զբաղվում էր արհեստներով։ Արհեստները կենտրոնացված էին գլխավորապես քաղաքներում։ Նրանք բոնում էին ամբողջ թաղամասեր, որոնցից շատերը կոչվում էին արհեստի այս կամ այն տեսակի անունով. օրինակ՝ շիլաչի — կարմիր ներկողներ, դամրչի-երկաթագործներ և այլն։

Հայ արհեստավորության աչքի ընկնող կենտրոններն էին՝ Թիֆլիսը, Երևանը, Ալեքսանդրոպոլը, Նախիջևանը, Կոնստանդնուպոլիսը, Կարսը, Ախալցխան, Էրզուրումը, Վանը, Շուշին, Նուխին, Շամախին։ Բացի քաղաքներից՝ մեծ թվով արհեստավորներ ապրում և աշխատում էին նաև գյուղում։

Շուրջ հարյուր տեսակ արհեստներ կային Հայաստանում, բայց ամենից ավելի տարածվածներն էին՝ դարբնությունը, պղնձագործությունը, բրուտագործությունը, քարտաշությունը, հյուսնությունը, ջուլհակությունը, ներկարարությունը, մետաքսագործությունը, ոսկերչությունը և զինագործությունը։

19-րդ դարի 30-ական թվականներին Հայկական մարզում արհեստների թիվը հասնում էր 96-ի։ Արհեստներով զբաղվում էր ավելի քան տաս հազար մարդ, որից Երևանում՝ 2349, Նախիջևանում՝ 715, Օրդուբադում՝ 608, իսկ շրջաններում՝ 6476։ Արհեստներից ամենատարածվածը ջուլհակությունն էր։ Հայկական մարզի բնակիչներից շատերն ունեին իրենց դազգահները և բամբակից թել էին մանում ու կտավ գործում։ Դազգահների թիվը հասնում էր 4206-ի, իսկ կտավի տարեկան արտադրանքը կազմում էր մոտ 500 հազար արշինի։

Արհեստավորները, տարիներ շարունակ, մասնագիտանում էին մեկ կամ մի քանի տեսակ իրեր պատրաստելու մեջ և երբեմն կատարելության էին հասցնում իրենց ձեռքի աշխատանքը։ Հայ արհեստավորների մեջ շատ կային այնպիսի վարպետներ, որոնց համբավը տարածված էր ոչ միայն Հայաստանում, այլև Հայաստանից դուրս։

1840—1850-ական թվականներին Հայաստանում ու ողջ Անդրկովկասում արհեստներն ապրեցին իրենց զարգացման վերջին շրջանը, որից հետո սկսվեց նրանց քայքայումն ու անկումը։

Համքարություններ։— Արհեստավորներն ունեին իրենց կազմակերպությունը, որն արևելահայերի մոտ կոչվում էր համքարություն, իսկ արևմտահայերի մոտ՝ էսնաֆություն։ Համքարությունը կամ էսնաֆությունը միևնույն արհեստի շուրջը համախմբված աշխատողների մի միություն էր ցեխային կազմակերպություն։ Նա ուներ իր կանոնադրությունը, դրոշակը, գերբը և փոխօգնության գանձարանը։

Համքարություններն իրենց կազմակերպության ներսում օգտվում էին տնտեսական, դատական և վարչական որոշ իրավունքներից։ Նրանք կարգադրություններ էին անում ապրանքների տեսակների, գների և արհեստի հետ

կապված արտադրական այլ հարցերի վերաբերյալ։ Համքարություններն ընտրում էին իրենց ավագներ, ժողովներ գումարում, կազմակերպված տոնախմբություններ և ցույցեր անցկացնում։

19-րդ դարի կեսերին Կոստանդնուպոլսի հայ գաղութում կար 65 էսնաֆություն։ Թբիլիսիում կար 97 համքարություն և մոտ 5670 արհեստավոր։ Երևանում՝ 27 համքարություն, 2137 արհեստավոր։ Արհեստավորների մի մասն ընդգրկված չէր համքարությունների մեջ։

Համքարությունները միատարր չէին։ Նրանք կազմված էին վարպետներից, ենթավարպետներից ու աշակերտներից։ Ենթավարպետները և մանավանդ աշակերտները մշտապես ճնշվում ու շահագործվում էին վարպետների կողմից։ Ծնողներն իրենց երեխաներին վարպետին հանձնելիս, սովորաբար հայտարարում էին «Որդուս հանձնում եմ քեզ, նրա միսը քեզ, ոսկորը ինձ։ Պատժիր նրան, խստորեն պատժիր, միայն թե արհեստ սովորեցրու»։

Աշակերտների ուսուցման ժամկետ սահմանված էր 3—10 տարի, նայած տեղին ու մասնագիտությանը։ Վարպետներն ամեն կերպ աշխատում էին թաքցնել իրենց արհեստի գաղտնիքները, ոչ միայն արհեստավորներից, այլև աշակերտներից։

Համքարություններն իրենց էությամբ պահպանողական կազմակերպություններ էին։ Նրանք խանգարում էին երկրի տնտեսական զարգացմանը։ 19-րդ դարի կեսերից Ռուսաստանում զարգացող կապիտալիզմի, ֆաբրիկա-գործարանային էժան ապրանքների Անդրկովկաս ներմուծման հետևանքով, արհեստների արտադրանքը հետզհետե դուրս էր մղվում, համքարությունները բռնում էին իրենց քայքայման ուղին։

Արդյունաբերություն։— 19-րդ դարի առաջին կեսին Հայաստանում արդյունաբերություն, այդ բառի իսկական իմաստով, գոյություն չուներ։ Բայց կային տնայնագործական բազմաթիվ մանր ձեռնարկություններ, որոնք, արհեստների հետ միասին, կարևոր դեր էին խաղում ժողովրդի առօրյա կարիքները բավարարելու գործում։ Այդ տիպի ձեռնարկություններից էին՝ օճառի, կաշվի, բրուտագործական, ներկարարական, գինու, օղու ձեռնարկությունները, ձիթհաններ և այլն։

Երևանում կար 86 ձեռնարկություն, այդ թվում՝ 29 կաշվի, 3 գինու, 1 օճառի և 46 ներկարան։ Ալեքսանդրոպոլում կար 36 ձեռնարկություն, որից 12 օճառի, 3 կաշվի, 1 աղյուսի և 3 ձիթհան։

Այս ձեռնարկությունները կառուցված էին պրիմիտիվ տեխնիկայով, աշխատում էին ձեռքի, լծկան անասունների և ջրի ուժով։ Յուրաքանչյուր ձեռնարկության մեջ աշխատում էր 5—10—15 բանվոր։ Դրանց մեծ մասը սեզոնային բանվորներ էին, որոնք անխնա շահագործվում էին տերերի կողմից։ Արդյունաբերական արտադրանքի ինչպես քանակը, այնպես էլ որակը չափազանց ցածր էր, իսկ գները՝ բավականին բարձր։

Հայաստանում լայն տարածված էր բրուտագործությունը։ Մի շարք շրջաններում կային բրուտագործական արհեստանոցներ, որտեղ արտադրվում էին մեծ քանակությամբ զանազան տեսակի կավե ամաններ, կժեր ու կարասներ։

Արդյունաբերության ուշադրավ ճյուղերից մեկը հանքագործությունն էր։ 19-րդ դարի առաջին կեսում Արևելյան Հայաստանում մշակվում էին Ալավերդու, Աղթալայի և Շամլուղի պղնձահանքերը, Նախիջևանի և Կողբի աղահանքերը, իսկ Արևմտյան Հայաստանում՝ Գյումուշխանայի արծաթահանքերը։

1830-ական թվականներին պղնձի տարեկան արտադրանքը, միջին հաշվով, կազմում էր 2000 փութ, 1840-ական թվականներին՝ մոտ 5000 փութ։ Ադի արտադրանքը 1830-ական թվականներին կազմում էր մոտ 250 հազար փութ, 1840-ական թվականներին՝ 500 հազար փութ, իսկ 1850-ական թվականներին՝ ավելի քան մեկ միլիոն փութ։ Հայաստանի լեռնարդյունաբերության այս մասնակի աճը կապված էր 1840—1850-ական թվականներին Ռուսաստանում և Անդրկովկասում սկսված առևտրաարդյունաբերական կյանքի աշխուժացման հետ։ Այդ նույն շրջանից սկսվում է նաև Հայաստանի պղնձարդյունաբերության երկրորդ կարևոր կենտրոնի՝ Զանգեզուրի (Կավարտ, Ղաթար, Հալիձոր, Ագարակ) հանքերի մշակությունը։

Հանքերը սովորաբար տրվում էին կապալով։ Կապալառուները, միայն իրենց շահը նկատի ունենալով, գիշատիչ կերպով էին շահագործում բնական այդ հարստությունները։ Ալավերդու պղնձահանքերում, տեղի հայ և հույն բանվորներից բացի, պարտադիր կարգով աշխատեցնում էին նաև Լոռու և Բորչալուի շրջանների ճորտ գյուղացիներին, որոնք ամրացվում էին հանքերին։ 1850-ական թվականներին գյուղացիների ամրագրման այդ սիստեմը վերացվում է, որովհետև արդյունավետ չէր։

Լեռնային արդյունաբերության մեջ աշխատողների միջին թիվը կազմում էր 1000—1500 մարդ։ Հանքերում աշխատող բանվորների դրությունը չափազանց ծանր էր։ Կապալառուների գիշատիչ շահագործումը, դաժան ծեծը, աշխատանքային ծանր ու վտանգավոր պայմանները և չնչին վարձատրությունը անտանելի էին դարձնում նրանց կյանքը։ Ո՛չ պետությունը և ո՛չ էլ կապալառուները չէին մտահոգվում բանվորների կյանքի ապահովության մասին։ Հաճախակի փլվածքներ էին լինում բանվորների վրա և մեծ զոհեր պատճառում նրանց։ Բանվորների մեջ ոչ միայն շահագրգռվածություն չկար արտադրանքը բարձրացնելու, այլև հաճախ նրանք լքում էին հանքերը և փախչում գյուղերը։

Լեռնարդյունաբերությունը և ընդհանրապես Հայաստանի, այսպես կոչված, մանուֆակտուրային արտադրությունը, 19-րդ դարի առաջին կեսին գտնվում էր զարգացման չափազանց ցածր մակարդակի վրա։ Կառավարությունը և կապալառուները իրենց անմիջական օգուտի հետևից ընկնելով, ոչ միայն չէին մտահոգում, այլև չէին էլ ցանկանում որևէ կերպ նպաստած լինել տեղական արդյունաբերության զարգացմանը։ Հայաստանի բնական առատ հարստությունները մեծ մասամբ մնում էին անմշակ։

Առևտուր։— Թյուրքիայի և Իրանի տիրապետության շրջանում առևտուրը Հայաստանում զարգացած չէր։ Ճիշտ է, հայ վաճառականները երկրի ներսում և երկրից դուրս առևտուր կատարում էին, բայց ներքին շուկան դեռևս չափազանց թույլ էր։ Բնատնտեսական հարաբերությունները և ժողովրդի ցածր գնողունակությունը մի կողմից, երկրում տիրող ֆեոդալական անարխիան, մեծ մաքսերը և ճանապարհների անապահովությունը մյուս կողմից, արգելք էին հանդիսանում առևտրի զարգացմանը։ Խոսելով Թյուրքիայի առևտրի մասին Ֆ. Էնգելսն ասում է, որ այնտեղ առևտուր անելու եղանակը բարվոք կտրել էր։ Թուրք փաշաներն ու քուրդ բեկերը առևտրականներից զանազան պատրվակներով խլում էին նրանց ապրանքներն ու դրամը։ Հաճախ էր պատահում, որ առևտրականներին ճանապարհներին կողոպտում ու սպանում էին։

Այլ էր դրությունը Ռուսաստանի տիրապետության տակ անցած շրջաններում։

Ցարական կառավարությունը Անդրկովկասը տնտեսապես ու քաղաքականապես Ռուսաստանին կապարկելու նպատակով, հովանավորում էր առևտրականներին։ Նա ամեն կերպ նպաստում էր Ռուսաստանի ու Անդրկովկասի առևտրական կապերի ամրապնդմանը, ռուսական արդյունաբերական ապրանքների տարածմանը Անդրկովկասում և Մերձավոր Արևելքում։ Ցարիզմի այդօրինակ առևտրական քաղաքականությունը սերտորեն կապված էր նրա արտաքին քաղաքականության հետ, որն ուղղված էր իր գլխավոր մրցակցի՝ Անգլիայի մոնոպոլիստական քաղաքականության դեմ Մերձավոր Արևելքում։

Գյուլիստանի, Թուրքմենչայի ու Ադրիանապոլսի պայմանագրերում հատուկ կետեր էին մտցվել Սև ու Կասպից ծովերի և Անդրկովկասի վրայով Իրանի և Թյուրքիայի հետ առևտրական սերտ կապեր հաստատելու վերաբերյալ։ Այդ պայմանագրերը, ինչպես և Դերբին մաքսերի վերացումը նպաստեցին Անդրկովկասի ինչպես արտաքին, այնպես էլ ներքին առևտրի աշխուժացմանը։

Բայց ամենից ավելի նպաստավոր եղավ 1891 թվականի հոկտեմբերի 8-ի օրենքը տարանցիկ ազատ առևտրի վերաբերյալ։ Այդ օրենքի համաձայն՝ Անդրկովկաս ներմուծվող ապրանքների համար տաս տարով սահմանվում էր արտոնյալ մաքս (հինգ տոկոս)։ Առևտրականներն ազատվում էին անձնական ծառայություններից ու օթևանի պարհակից, իրավունք էին ստանում անշարժ սեփականություն ձեռք բերել, պետությունից հող գնել և ցանկացած ժամանակ վաճառել, Սև ու Կասպից ծովերի միջև ընկած առևտրական ճանապարհի վրա քարվանսարաներ կառուցել։ Բացի այդ, առևտրական տրանսպորտի ապահով երթևեկության համար՝ Ռեղուբկալեից Թիֆլիս, Թիֆլիսից Բաքու և Թիֆլիսից Մարաղա, կառավարությունը տրամադրում էր զինվորական ուժ։

Անդրկովկասի տարանցիկ առևտրի համար ստեղծված այսօրինակ արտոնյալ պայմանները, մեծապես նպաստում են առևտրի զարգացմանը։ Ազատ առևտրի առաջին հինգ տարում՝ 1822—1826 թթ. Անդրկովկասի առևտրական շրջանառությունը կազմում է 20 միլիոն ռուբլի, իսկ երկրորդ հնգամյակում՝ 1827—1831 թթ. 39 միլիոն ռուբլի։

Անդրկովկասի առևտրի մեծ մասը կենտրոնացած էր հայ առևտրականների ձեռքում։ Նրանք Ռուսաստանից (Մոսկվա, Նիժնի-Նովգորոդ) և Արևմտյան Եվրոպայից (Լայպցիգ, Մարսելյ) ֆաբրիկա-գործարանային ապրանքներ էին ներմուծում Անդրկովկաս, Իրան, Թյուրքիա, Միջին Ասիա, փոխարենը արտահանում արևելյան ապրանքներ՝ գլխավորապես մետաքս և տորոն։ Անդրկովկասի տարանցիկ առևտրից հայ վաճառականները մեծ շահույթ էին ստանում։ Առևտրական կապիտալը կենտրոնանում էր նրանց ձեռքում։

Կապիտալի կուտակման կարևոր աղբյուրներից էին նաև կապալները։ Ցարական կառավարությունը, ռուս-պարսկական և ռուս-թյուրքական պատերազմների տարիներին, զորքի և ռազմական ու վարչական ապարատի պահպանման համար խոշոր գումարներ էր մտցնում Անդրկովկաս։ Այդ գումարների մեծ մասը կենտրոնանում էր հայերի ձեռքում, որոնց, որպես ձեռներեց, շահագրգռված և վստահելի տարրի, կապալով հանձնում էին զորքի մատակարարման, փոխադրումների և կառուցումների գործը։ Հայ կապալառուների ձեռքում էր գտնվում նաև Անդրկովկասի բնական հարստությունների (հանքեր, լճեր և այլն) կապալների մեծ մասը։

. Այսպիսով, 19-րդ դարի առաջին կեսում, կապիտալի, այսպես կոչված, նախնական կուտակման շրջանում, ավելի է ամրապնդվում Անդրկովկասի հայ

առևտրական բուրժուազիայի տնտեսական դրությունը։ Առևտրական բուրժուազիայի առանձին ներկայացուցիչներ՝ Միրզոյան, Իզմիրյան, Թառումյան, Թամամշյան և ուրիշներ, միլիոնների հասնող գումարներ են կուտակում։ Նրանցից շատերը հետագայում իրենց կապիտալներն սկսում են գործադրել նաև արդյունաբերության մեջ և դառնալ խոշոր առևտրա-արդյունաբերողներ։

Պատմական պայմանների բերումով, հայ առևտրա-արդյունաբերողները իրենց գործունեությունն սկսելով Հայաստանից դուրս՝ Անդրկովկասի վարչական և տնտեսական կենտրոն Թիֆլիսում, Սև ու Կասպից ծովերի ափերին, առևտրական ճանապարհի վրա ընկած նկամտարեր վայրերում, այդպես էլ շարունակում են և ամրանում այդ վայրերում։ Նրանք իրենց կապիտալները չներդրեցին Հայաստանում։ Առևտրական ճանապարհներից ու կենտրոններից հեռու ընկած Հայաստանում 19-րդ դարի առաջին կեսում առևտրա-արդյունաբերական խոշոր կենտրոններ չստեղծվեցին։

19-րդ դարի կեսերին գնալով ավելի է ուժեղանում առևտրական կապիտալի մուտքը գյուղ, որտեղ նա, ինչպես Կ. Մարքսն է ասում, իր երկվորյակի՝ վաշխառուական կապիտալի հետ, նոր ճեղքեր է բացում բնատնտեսության մեջ և հետևհետե քայքայում ֆեոդալական հարաբերությունները գյուղում։

Քաղաքներ։— 19-րդ դարի առաջին կեսում շատ քիչ քաղաքներ կային Հայաստանում։ Եղածներն էլ ավելի շուտ, ասիական տիպի գյուղաքաղաքներ էին, կառուցված անպլան, մեծ մասամբ մեկ հարկանի հողե տներով, նեղ և ծուռումուռ փողոցներով։ Հազվագյուտ դեպքերում կարելի էր հանդիպել երկհարկանի տների և քարե շենքերի։ Քաղաքի փողոցներում և շատ տներում գիշերները լուսավորություն չէր լինում։ Քաղաքացիներից շատերը իրենց տներում անասուններ էին պահում։

Քաղաքի բնակիչները, բացի արտոնյալ դասին պատկանողներից, զբաղվում էին առևտրով, արհեստներով, արդյունագործությամբ։ Արհեստի և արդյունագործության արտադրանքի մի մասը արտահանվում ու վաճառվում էր գյուղերում, իսկ մյուս մասը՝ քաղաքների շուկաներում։

Հայաստանի առավել աչքի ընկնող քաղաքներից էին Երևանը, Ալեքսանդրոպոլը, Նախիջևանը, Կարսը, Էրզրումը և Վանը։ Դրանք սոսկ վարչական և առևտրա-արհեստագործական կենտրոններ էին։ Այս քաղաքներում ապրում էին մի քանի հազարից մինչև մի քանի տասնյակ հազար հայեր, մեծ մասամբ խառը հարևան ժողովուրդների հետ։ Քաղաքները կուլտուրապես շատ հետամնաց էին, չկային հասարակական ձեռնարկություններ։

Հայաստանի այդ շրջանի քաղաքների մասին մեզ ավելի կոնկրետ պատկերացում են տալիս Երևանին վերաբերող տվյալները։ Երևանը, որը Հայաստանի հնագույն քաղաքներից էր, 1830-ական թվականներին ուներ 11.500 բնակիչ։ Արտոնյալ դասին (ազնվականներ և հոգևորականներ) պատկանողների թիվը կազմում էր 1125 հոգի։

Որպես Հայկական մարզի, իսկ հետագայում Երևանի նահանգի վարչական կենտրոն, Երևանի քաղաքային կյանքը, մյուս քաղաքների համեմատությամբ, ամենից ավելի զարգացած էր։ 1843 թվականին Երևանն իր քաղաքական նշանակությամբ, Անդրկովկասի քաղաքների համեմատությամբ, բռնում է 5-րդ տեղը, իսկ Ալեքսանդրոպոլը՝ 8-րդ տեղը։

1830—1840-ական թվականներին, երբ Երևանում սկսել էին գործել գավառական ու թեմական դպրոցները, հատկապես 1843—1848 թվականներին,

երբ մեծ լուսավորիչ Խաչատուր Աբովյանը աշխատում էր Երևանում որպես գավառական դպրոցի տեսուչ, քաղաքի կուլտուրական կյանքը ևս մասամբ կենդանանում է։ Սակայն, քաղաքի բարեկարգման, հասարակական-կուլտուրական զարգացման նկատմամբ ցարական չինովնիկների և տեղական ազնվականների ու խոջաների անտարբերը և շահամոլությունը հետևանքով, Երևանը մնում էր գավառական հետամնաց քաղաքի վիճակում։ Փաստորեն նա այդպես էլ մնաց մինչև սովետական կարգերի հաստատումը։

Բայց, եթե 19-րդ դարի առաջին կեսում Հայաստանում քաղաքները կարգացած չէին, այդ դեռ չի նշանակում, թե առհասարակ հայ ժողովուրդը քաղաքային կյանք չի ունեցել։ 19-րդ դարի առաջին կեսում Անդրկովկասի քաղաքային բնակչության ճնշող մեծամասնությունը հայեր էին։ Հայերը մեծ թիվ էին կազմում Թիֆլիսում, Գորիում, Ախալցխայում, Շուշիում, Շամախիում, Նուխիում, իսկ հետագայում նաև Բաքվում ու Բաթումում։ Այս կենտրոններում էլ հենց, եղբայրական վրաց և ադրբեջանական ժողովուրդների փոխադարձ կապերի պայմաններում, ստեղծվել ու զարգացել է հայկական քաղաքային կյանքն ու կուլտուրան, ամրապնդվել են Անդրկովկասի ժողովուրդների հասարակական-քաղաքական և կուլտուրական կապերը։

Ցարիզմի գաղութային քաղաքականությունը Հայաստանում։— Արևելյան Հայաստանի միացումից հետո, ինչպես տեսանք, ցարական կառավարությունը վարչական նոր կարգեր ու օրենքներ հաստատեց այդտեղ։ Բայց դա հարցի մի կողմն էր միայն։ Չէր կարելի ամրապնդել ու հարատև դարձնել նոր կարգերը, առանց այդ կարգերի համար անհրաժեշտ սոցիալ-տնտեսական բազա և դասակարգային հենարան ստեղծելու։ Ահա թե ինչու ցարական կառավարությունը, վարչական ռեֆորմների հետ միաժամանակ, ձեռնամուխ եղավ Հայաստանում անցկացնելու նաև տնտեսական ռեֆորմներ։

Ցարական կառավարությունը Հայաստանի, ինչպես և ամբողջ Անդրկովկասի վրա նայում էր որպես իր գաղութի վրա։ Պատահական չէ, որ դեռևս 1827 թվականին ֆինանսների մինիստր գրաֆ Կանկրինը Նիկոլայ 1-ին ներկայացրած մի զեկուցագրում Անդրկովկասն անվանում էր Ռուսաստանի գաղութ։ 1840 թվականին Նիկոլայ 1-ին ներկայացված մի այլ զեկուցագրում ասված է, թե Անդրկովկասի ժողովուրդներին հարկավոր չեն համալսարաններ, ֆաբրիկաներ և գործարաններ։ Հարկավոր են առևտրական ճանապարհներ՝ Անդրկովկասը Ռուսաստանի հետ կապելու, այնտեղից հումք ստանալու և փոխարենը մանուֆակտուրային արտադրանքներ տալու համար։

19-րդ դարի առաջին կեսում Անդրկովկասի գաղութացումը կատարվում էր ֆեոդալական-ճորտատիրական Ռուսաստանի կողմից։ Ցարիզմը այդ շրջանում արտահայտում էր կալվածատեր-ճորտատերերի և առևտրականների շահերը։ Բուրժուազիայի դասակարգային շահերը, ինչպես Վ. Ի. Լենինն է ասում, նա սկսեց արտահայտել ավելի ուշ, Ալեքսանդր 2-րդի ժամանակ։

Ցարիզմի տնտեսական քաղաքականությունն Անդրկովկասում ամբողջապես համապատասխանում էր նրա դասակարգային էությանը։ Այդ քաղաքականությունը եկավ ամրապնդելու Անդրկովկասի հողատեր-կալվածատերերի իրավունքները գյուղացիների նկատմամբ և նպաստելու առևտրի զարգացմանը։

Բայց, եթե ցարական հակաժողովրդական կառավարությունը ձգտում էր Անդրկովկասի ժողովուրդներին գաղութային ճնշման ենթարկել, ապա այլ կերպ էին նայում Անդրկովկասի վրա ռուս ժողովրդի առաջավոր մտածողները։

Այսպես, օրինակ, դեկաբրիստ-ռևոլյուցիոներները ծրագրում էին Անդրկովկասը մտցնել ապագա դեմոկրատական Ռուսաստանի կազմի մեջ, մյուս մարզերի հետ հավասար իրավունքներով։ Դեկաբրիստների Հարավային ընկերության ղեկավար Պ. Պեստելի կոնստիտուցիայով նախատեսվում էր ռեսպուբլիկական կարգեր հաստատել նաև Անդրկովկասում։ Ճիշտ է, այդտեղ նախատեսվում էր Անդրկովկասի ժողովուրդների ազգային ինքնորոշման իրավունքը, բայց և այնպես նրանք, որպես ապագա ռեսպուբլիկայի քաղաքացիներ, մյուս բոլոր ժողովուրդների հետ միասին օգտվելու էին հավասար իրավունքներից։

Ռուս ժողովրդի լավագույն զավակներից մեկը՝ Ա. Ս. Գրիբոեդովը, որի անունը սերտորեն կապված է Անդրկովկասի ժողովուրդների հետ, նույնպես կողմնակից չէր ցարական կառավարության գաղութարար քաղաքականության։

Ա. Ս. Գրիբոեդովը ձգտում էր Ռուսաստանի ու Անդրկովկասի միջև քաղաքական, տնտեսական և կուլտուրական սերտ կապ հաստատել, բայց ոչ թե Անդրկովկասը գաղութ դարձնելու նպատակով, ինչպես այդ անում էին ցարական գաղութարարները, այլ նրա տնտեսությանը և կուլտուրային զարկ տալու, ժողովրդի դրությունը բարելավելու, երկիրը, ինչպես ասում էր նա, «մինչ այդ իրեն անծանոթ նոր կյանքի համար վերածնելու» նպատակով։

Եթե ցարիզմը, հենվելով տեղական շահագործող դասակարգերի վրա, ճնշում էր Անդրկովկասի ժողովուրդներին, ապա այդ նույն ցարիզմի ճնշման տակ գտնվող ռուս ժողովրդի առաջավոր մարդիկ պաշտպան էին կանգնում նրանց։ Հանձին ռուս մեծ ժողովրդի, Անդրկովկասի ժողովուրդներն ունեին իրենց հավատարիմ պաշտպանը և լավ բարեկամը։ Ցարիզմի դեմ մղվող համատեղ պայքարում այդ ժողովուրդների եղբայրական կապերը գնալով ավելի ու ավելի էին ամրապնդվում։

Ֆեոդալական-ճորտատիրական հարաբերությունների ամրապնդումը։— Իր տնտեսական քաղաքականության կիրառման ընթացքում ցարական կառավարությունը լուրջ դժվարությունների հանդիպեց հողային հարցում։

Հողային հարցը Անդրկովկասում շատ խճճված էր։ Հողատիրության և հողօգտագործման մի շարք ձևեր էին ստեղծվել Անդրկովկասում, մեկը մյուսից տարբեր ու հակասական։ Օրինակ, Վրաստանում ֆեոդալական հարաբերությունները անհամեմատ ավելի զարգացած էին, քան Հայաստանում և Ադրբեջանում։ Այդտեղ ճորտատիրական կարգերը, Ռուսաստանի նման, իշխող էին։ Իսկ Հայաստանում և Ադրբեջանում գյուղացիների ճնշող մեծամասնությունը իրավական տեսակետից ազատ էր ճորտական կախումից։ Կալվածատերերն իրավունք չունեին նրանց ընծայել կամ վաճառել, ինչպես այդ անում էին Ռուսաստանում և Վրաստանում։

Ցարական կառավարությունը հենց սկզբից ճանաչեց վրաց ազնվականության իրավունքները և հավասարեցրեց ռուս ազնվականների հետ։ Հայաստանի և Ադրբեջանի կալվածատերերի՝ խանների, բեկերի, աղալարների ու մելիքների հողատիրական իրավունքները սկզբնական շրջանում կառավարությունը չճանաչեց. դա վիճելի և ուսումնասիրության կարոտ հարց համարվեց։

1830—1840-ական թվականներին Անդրկովկասի վարչական ու տնտեսական դրության ուսումնասիրության հետ միաժամանակ ուսումնասիրում են նաև խանների, բեկերի, աղալարների ու մելիքների վարչական և կալվածատիրական իրավունքները։ Նրանցից պահանջվում էր փաստաթղթերով ապացուցել իրենց հողատեր-կալվածատեր լինելը։

Խանները, բեկերը, աղալարներն ու մելիքները, կալվածատիրական իրավունք ձեռք բերելու համար, դիմում էին ամեն տեսակ խարդախ միջոցների՝ կեղծ փաստաթղթերի հորինման, կեղծ վկայությունների և կաշառքի։ Նրանք ամեն կերպ ձգտում էին ապացուցել, որ իրենք էլ ռուս և վրաց կալվածատերերի նման իրավունքներ ունեն հողի և գյուղացիների նկատմամբ։

Մուլքադարների ու թիուլիստների այդօրինակ քայլերը ուժեղ դիմադրության էին հանդիպում գյուղացիների կողմից։ Ամենուրեք մասսայական դժգոհություններ ու բողոքներ էին ծագում նրանց դեմ։ Գյուղական համայնքներն առանձին-առանձին կամ համատեղ բողոքներ էին գրում կառավարությանը և մերկացնում նրանց կեղծիքները, բայց գյուղացիների դիմումները, երկար քաշքշելուց հետո, մերժվում էին։ 1830—1840-ական թվականներից սկսած՝ այդ հողի վրա սրվում էր գյուղացիների ու կալվածատերերի դասակարգային պայքարը։

Ցարական կառավարությունը, պետական եկամուտներն ավելացնելու, բեկերի ու աղալարների վարչական և տնտեսական իրավունքները սահմանափակելու նպատակով, սկզբում փորձեց չճանաչել նրանց կալվածատիրական իրավունքները և մասամբ էլ այդ իրագործել, բայց հետագայում, իր սոցիալական հենարանն ամրապնդելու կապակցությամբ, հիմնովին փոխեց իր վերաբերմունքը։

Ռուսաստանում և Անդրկովկասում սկսված գյուղացիական մասսայական շարժումներն ու դժգոհությունները 1840—1850-ական թվականներին ցարական կառավարությանը է՛լ ավելի մոտեցրին տեղական իշխող դասակարգերին։ Մ. Վորոնցովի փոխարքայության ժամանակ վերջ տրվեց բեկերի, աղալարների ու մելիքների նկատմամբ մինչև այդ եղած քաղաքականությանը և դաշինք կնքվեց ցարական կառավարության ու Անդրկովկասի, այսպես կոչված, «բարձր դասի» միջև։ 1840—1850 թթ. հրատարակվեցին կալվածատիրական-ճորտատիրական բնույթի մի շարք օրենքներ ու կարգադրություններ, որոնք ավելի ամրապնդեցին այդ դաշինքը և ցարիզմի սոցիալական հենարանը հանդիսացող Անդրկովկասի հողատեր-կալվածատերերի դիրքերը։

Անդրկովկասում ֆեոդալական-ճորտատիրական հարաբերությունները ամրապնդելու տեսակետից առանձնապես կարևոր նշանակություն ունեցավ 1846 թ. դեկտեմբերի 6-ի օրենքը (ռեսկրիպտ), որը մեծ գոհունակությամբ ընդունվեց հողատեր-կալվածատերերի կողմից։

1846 թ. դեկտեմբերի 6-ի օրենքով ցարական կառավարությունը Անդրկովկասի խաներին, բեկերին, աղալարներին ու մելիքներին ճանաչեց որպես հողի ժառանգական սեփականատերեր։ Այդ նույն օրենքով նրանց վերադարձվեցին անցյալում խլված հողերը։ Կալվածատերերին, որպես հողի լիակատար սեփականատերերի, իրավունք տրվեց ժառանգել, ընծայել և վաճառել հողը, բայց միայն՝ «բարձր դասի» մարդկանց։ Նրանց տրվեցին նաև որոշ վարչական իրավունքներ։ Թիուլը՝ հողի ժամանակավոր սեփականությունը ճանաչվեց որպես ժառանգական սեփականություն։ Թիուլիստների և մուլքադարների իրավունքները փաստորեն հավասարեցվեցին։

Գյուղացիների և կալվածատերերի փոխհարաբերություններն առանձին նահանգներում սահմանվում էին 1847 թ. ապրիլի 20-ի ու դեկտեմբերի 28-ի և 1851 թ. հունիսի 8-ի օրենքներով, որոնք, 1846 թ. հիմնական օրենքի հետ միասին կոչված էին ամրապնդելու ցարիզմի սոցիալական հենարանը հանդի-

սացող հողատեր-կալվածատերերի իրավունքները աշխատավոր գյուղացիների նկատմամբ։

Գյուղացիների դրությունը։— Պարսկական բռնակալության դարավոր լծից ազատագրվելուց և Ռուսաստանի տիրապետության տակ անցնելուց հետո արևելահայ գյուղացիները ձեռք են բերում կյանքի ու գույքի ապահովություն. ստեղծվում են տնտեսական զարգացման համեմատաբար նպաստավոր պայմաններ։

Արևելյան Հայաստանում քաղաքական կարգերի փոփոխման հետևանքով փոփոխություններ են տեղի ունենում նաև երկրի տնտեսական կյանքում և բնակչության սոցիալական կազմում։ Խանական կարգերի տապալումից հետո Երևանի սարդարին (իսկ նա ամենախոշոր կալվածատերն էր խանության մեջ) պատկանող բոլոր հողերը, շարժական ու անշարժ գույքը պետականացվում են։ Պետականացվում են նաև Պարսկաստան փախած խաների ու բեկերի հողերի որոշ մասը։ Հողի մեծ մասը Արևելյան Հայաստանում անցնում է պետության ձեռքը։ Այդ հողերի վրա ապրող գյուղացիները կոչվեցին պետական գյուղացիներ։

Պարսկաստանի և Թյուրքիայի սահմաններից Արևելյան Հայաստան (Ռուսահայաստան) գաղթածները ևս պետական հողերի վրա են բնակեցվում։ Այսպիսով, պետական գյուղացիները կազմում են արևելահայ գյուղացիների ճնշող մեծամասնությունը։ Գյուղացիների մնացած մասը ապրում էր կալվածատիրական հողերի վրա և կոչվում էին կալվածատիրական գյուղացիներ։

Օգտվելով իրենց տնտեսական ու վարչական դիրքից, կալվածատերերը, ինչպես Անդրկովկասի մյուս մասերում, այնպես էլ Հայաստանում, գյուղացիներին փաստորեն ճորտական ու կիսաճորտական վիճակի մեջ էին դրել և անխնա կողոպտում էին նրանց։ Անդրկովկասին լավատեղյակ ռուս պաշտոնյա Զուբարևը, դեռևս 1829 թվականին գրած մի զեկուցագրում խոսելով գյուղացիների ծանր դրության մասին, ասում է. «Ղազախի և մյուս բոլոր գավառների գյուղացիները արտաքուստ են միայն ազատ, բայց ուշադիր նայելով կարելի է տեսնել, որ նրանք գտնվում են աղալարների ու մելիքների դաժան ստրկության պայմաններում»։

Աշխարհիկ կալվածատերերից հետ չէին մնում նաև հոգևոր կալվածատերերը։ Էջմիածնի, Սանահնի, Տաթևի, Սևանի և մի շարք այլ վանքեր ունեին իրենց կալվածքները, գյուղերը, անհատ ճորտերը և ոչ պակաս խստությամբ շահագործում էին գյուղացիներին։

Կալվածատերերի դաժան ճնշումից ազատագրվելու համար գյուղացիները հաճախ խույս էին տալիս կալվածատիրական հողերից, ձգտում էին բնակվել պետական հողերի վրա և կամ չճանաչել կալվածատիրոջ իրավունքները։

Գյուղացիների ու կալվածատերերի միջև ծայր առած դասակարգային այս պայքարի շրջանում էր, որ 1846 — 1851 թվականներին մեկը մյուսի հետևից հրապարակվեցին ցարական կառավարության կալվածատիրական-ճորտատիրական բնույթի օրենքները։

Այդ օրենքներով ցարական կառավարությունը, հավատարիմ իր դասակարգային էությանը, հողային հարցը լուծում էր հօգուտ կալվածատերերի և ի վնաս գյուղացիների։ Ամրապնդվում և ընդլայնվում էր կալվածատերերի իշխանությունը գյուղացիների նկատմամբ։

Այդ օրենքների համաձայն՝ գյուղացիները պարտավոր էին կալվածատի-

րոջը վճարել մուկք՝ բոլոր տեսակի բերքերի 4/30 մասը, կոռ կատարել կալվածատիրոջ համար՝ իրենց անասուններով ու գործիքներով մշակել նրա հողը, բերքը հավաքել, լցնել նրա ամբարը, այգիների, պարտեզների ու բանջարանոցների համար դրամական հարկ վճարել և այլն։

Բացի այդ, գյուղական համայնքը պարտավոր էր էվրեզ տալ, այսինքն՝ ամբողջ համայնքով որոշ օրեր աշխատել կալվածատիրոջ տնտեսության մեջ։

Լավ վիճակի մեջ չէին նաև պետական գյուղացիները։ Ճիշտ է, նրանք ազատ էին կալվածատիրական ճնշումներից, բայց նրանց վրա էլ ծանրացած էին պետական պարհակները, հարկերն ու տուրքերը։ Նրանք շատ զրկանքներ էին կրում նաև հողի ու ջրի պակասությունից։

Ռուսական տիրապետության սկզբնական շրջանում ինչպես հողային հարցում, այնպես էլ հարկային սիստեմում, կատարյալ քաոս էր ստեղծվել։ Իսկ այդ դրությունից ամենից ավելի տուժում էին գյուղացիները և ամենից ավելի շահում պետական պաշտոնյաները, մանավանդ հարկահավաքները։

Մինչև 1836 թվականը Հայկական մարզում հարկային սիստեմը հիմնականում մնացել էր նույնը, ինչ որ գոյություն ուներ պարսկական տիրապետության ժամանակ։ Մինչև իսկ հարկահավաքները (սարքյարները) չէին փոխվել։ Հարկերի ու տուրքերի գանձման ժամանակ շատ չարաշահումներ էին տեղի ունենում։ Ժողովրդի մեջ դժգոհությունն այն աստիճանի էր հասել, որ 1835 թվականին կառավարությունը հարկադրված եղավ հանձնարարել Հայկական մարզի պետ գեներալ-մայոր Վ. Բեհբութովին՝ անհապաղ ազատել սարքյարներին իրենց պաշտոններից և մշակել հարկային նոր սիստեմի նախագիծ։

Բեհբութովի ներկայացրած նախագծի համաձայն՝ 1836 թվականից փոխվում է Հայկական մարզի հարկերի նախկին սիստեմը։ Վեց տարով (1836—1842 թթ.), մտցվում է կոպարային հարկ, որը գյուղացիները կարող էին վճարել թե՛ բնամթերքով և թե՛ դրամով։

Բացի կոպարային հարկից, պետական և կալվածատիրական գյուղացիների վրա դրվում էր նաև դրամական հարկ։ Քոչվոր ցեղերի, ինչպես նաև Երևանի, Նախիջևանի ու Օրդուբադի քաղաքային բնակիչների վրա նույնպես դրամական հարկեր էին դրվում։ 1837 թվականից սկսած՝ հարկադրվում էին նաև գաղթականները, որոնք մինչ այդ ազատ էին հարկերից։

1843 թվականից Անդրկովկասում և Հայաստանում նատուրալ հարկի փոխարեն մտցվում է դրամական հարկ, որը եթե մի կողմից նպաստում է բնատնտեսության քայքայմանը և կապիտալիստական հարաբերությունների զարգացմանը, ապա մյուս կողմից ավելի է ծանրացնում առանց այդ էլ խեղճ ու աղքատ գյուղացիների դրությունը և դժգոհությունների ու բողոքների նոր ալիք բարձրացնում ցարական կառավարության և կալվածատերերի դեմ։

3. ԴՅՈՒՂԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄՆԵՐԸ 19-ՐԴ ԴԱՐԻ ԱՌԱՋԻՆ ԿԵՍՈՒՄ

Ինչպես տեսանք, գյուղացիները կրկնակի ճնշման էին ենթարկվում թե՛ տեղական հողատեր-կալվածատերերի և թե՛ ցարական կառավարության կողմից։ Միշտ չէ, որ գյուղացիները կարողանում էին տանել այդ ճնշումները։ Հաճախ նրանք ըմբոստանում և պայքարի էին դուրս գալիս իրենց ճնշողների դեմ։

Դժվարին էին գյուղացիների պայքարի պայմանները։ Նախ՝ նրանք մե-

նակ էին, դեռևս չկար բանվոր դասակարգ,— գյուղացիների իսկական դաշնակիցը, նրանց շահերի հավատարիմ պաշտպանը։ Այնուհետև, չափազանց ցածր էր նրանց քաղաքական գիտակցությունը, անկազմակերպ էին, չունեին փորձված ղեկավարներ։

Ցարական տիրապետության սկզբնական շրջանում գյուղացիների պայքարը հիմնականում ուղղված էր տեղական հողատեր-կալվածատերերի՝ խանների, բեկերի, աղալարների ու մելիքների դեմ։ Այդ պայքարում գյուղացիները նույնիսկ օդնություն ու պաշտպանություն էին փնտրում ցարական կառավարության մոտ՝ չգիտակցելով շահագործող կառավարության և շահագործող դասակարգերի շահերի ընդհանրությունը։ Ցարական չինովնիկների ճնշումները, 1830—1840-ական թվականների վարչական ու տնտեսական ռեֆորմները մասամբ բաց արին գյուղացիների աչքերը։ Նրանք սկսեցին պայքարի դուրս գալ նաև ցարիզմի գաղութային ճնշման դեմ։

Անկազմակերպ (քաղաքական պայքարի փորձ չունեցող) գյուղացիների մոտ յուրօրինակ ձևով էր արտահայտվում այդ պայքարը։ Այսպես, օրինակ՝ երբ 1837 թ. հոկտեմբերին Նիկոլայ 1-ին կայսրը այցելում է Հայաստան, Արարատյան դաշտի գյուղացիները ճանապարհներին, տների կտուրների վրա կրակ են վառում՝ ցույց տալու համար, որ իրենք էլ այդպես վառվում են կալվածատերերի ու պաշտոնյաների ձեռքին։ Սարդարապատում գյուղացիները թագավորին ներկայացնում են փետրահան արած մի հավ, կամենալով հասկացնել, որ իրենց էլ այդպես փետրահան են անում։

Երևանի, Էջմիածնի, Նախիջևանի, Դարալագյազի, Զանգեզուրի շրջաններում գյուղացիները մասսայորեն բողոքում, ելույթներ են ունենում մուլքադարների և ջիուլիստների դեմ, հողի ու ջրի համար, պետական և կալվածատիրական հարկերի ու պարհակների, ապօրինի բռնագանձումների դեմ։ Զանգեզուրի շրջանի Քանակոթ գյուղի բնակիչները 1837 թվականին գրած իրենց մի դիմումի մեջ ասում են. «Մեր պետերը ոչխարի հոտը մտած գայլի նման հոշոտում են մեզ»։ Դարալագյազի շրջանի Կորադիզ և Ալմալուղ գյուղերի բնակիչները գրում են, որ իրենց աղքատության և թշվառության միակ պատճառը կալվածատերերի ճնշումներն են։

1830-ական թվականների գյուղացիական շարժումների մեջ ամենից ուշագրավը Նոր Բայազետի (Նախկին Գյոքչայի) շրջանի գյուղացիների ելույթն է։

1837 թվականին լրանում է Հին Բայազետից Նոր Բայազետ գաղթած հայերին տրված արտոնությունների ժամկետը։ Նրանցից պահանջվում է 1837 թվականի բերքից հարկ վճարել։ Նոր Բայազետի գաղթականները դիմում են կառավարությանը, պատճառաբանելով, որ ի վիճակի չեն վճարելու, և հրաժարվում են հարկ վճարելուց։ Նոր բայազետցիների օրինակին հետևում են շրջանի 27 գյուղերի հայ գաղթականները և մոտակա մի քանի գյուղերի ադրբեջանցիները։ Գավառապետը իր ներկայացուցիչներին ուղարկում է ըմբոստներին կարգի հրավիրելու, բայց գյուղացիները վռնդում են նրանց։

Նոր Բայազետ է գալիս Հայկական մարզի պետ գեներալ-մայոր Բեհբութովը։ Նա փորձում է իր «խրատներով» ու «հորդորներով» ազդել գյուղացիների վրա, բայց իզուր։ «Կատաղի ամբոխը,— ինչպես նա ասում է Անդրկովկասի կառավարչապետ բարոն Ռոզենին 1838 թ. փետրվարի 19-ին գրած

ռապորտում,— ասիթ էր որոնում անկարգություններ անելու և պատրաստ էր բացահայտ խռովություն կատարելու»։ Բեհբութովը գրավոր կարգագրություն է անում գյուղացիներին և ժամկետ նշանակում հարկերը մուծելու համար։ Բայց այդ էլ չի օգնում։ Ապստամբ գյուղացիները մերժում են նրա պահանջը, իսկ մի շարք տեղերում ծեծում և հեռացնում են մելիքներին ու տանուտերներին։ Հավաքված բազմության միջից լսվում են «Մենք չենք ուզում մելիքներ, տանուտերներ և շրջանային պետ» բացագանչությունները։ Գեներալ Բեհբութովը, ոչ մի արդյունքի չհասնելով, վերադառնում է Երևան։

1838 թվականի մարտին բարոն Ռոզենը կարգադրում է վենքի ուժով ճնշել գյուղացիների ելույթները։ Նոր Բայազետ է ուղարկվում եգերական երկու վաշտ, երկու լեռնային հրանոթ և կազակային մեկ հարյուրակ։ Մարտի վերջերին ճնշվում է գյուղացիների ելույթը։ Շարժման ղեկավարներից 13 հոգու կալանավորում և հանձնում են ռազմական դատարանին. դրանցից 10 հոգու մարմնական պատժի են ենթարկում, իսկ երեք գլխավորներին՝ Բարսեղ Ալիբրունուն, Գալուստ Շահումյանին և Նահապետ Բուդաղյանին բանտարկում են։

Նոր Բայազետի շրջանի 30 գյուղերի համատեղ ելույթը առաջին խոշոր ելույթն էր ցարական կառավարության դեմ և կարևոր նշանակություն ունեցավ Հայաստանի գյուղացիական շարժումների հետագա զարգացման համար։

19-րդ դարի 40—50-ական թվականների կալվածատիրական-ճորտատիրական բնույթի ցարական օրենքները ինչպես Վրաստանի և Ադրբեջանի, այնպես էլ Հայաստանի գյուղացիության մեջ դասակարգային պայքարի նոր ալիք առաջ բերին։ Հողազուրկ և սակավահող գյուղացիները հնարավոր բոլոր միջոցներով շարունակում էին պայքարել կալվածատեր-ճորտատերերի և նրանց շահերի պաշտպան ցարական կառավարության դեմ։

Կոտայքի և Ախտայի շրջաններում կալվածատեր Գեղամյանների ու Մելիք-Ադամալյանների դեմ համառ ու տևական պայքար են մղում Բջնի, Ծլղուկան, Գյոյ-Քիլիսա, Կարենիս և այլ գյուղերի բնակիչները։ Բջնիի գյուղացիները, որոնք 19-րդ դարի սկզբներից սիստեմատիկարար պայքարում էին կալվածատեր Գեղամյանների դաժան շահագործումից ազատագրվելու համար, 1850 թ. գարնանը Երևանի նահանգապետին ուղղած իրենց մի դիմումի մեջ գրում են, որ «ոչ մի պայմանով այլևս չեն կարող մնալ Աբսեն Սուլթանի հողի վրա» և խնդրում են իրենց տեղափոխել պետական հողի վրա։ Գյուղացիների պայքարը Գեղամյանների ու Մելիք-Ադամալյանների դեմ շարունակվում է երկար ժամանակ։

19-րդ դարի առաջին կեսի գյուղացիական շարժումների կարևոր էջերից է նաև Դարալագյազի շրջանի հայ և ադրբեջանական գյուղացիների համատեղ պաքարը կալվածատեր Թառումյանների դեմ։ Շուշու բնակիչ, հայտնի հարուստ կապալառու Սարդիս Թառումյանը գնումների և այլ խարդախ ճանապարհով Դարալագյազում մեծ քանակությամբ հող էր ձեռք բերել և անողոք կերպով շահագործում էր տեղի գյուղացիներին։ 1842 թվականից սկսած Այնապոր, Արփա, Խաչիկ, Կնիշիկ, Ռինդ, Իրտիշ, Քեշիշքենդ գյուղերի համայնքները բողոքում են տեղական և վերադաս իշխանություններին և խնդրում են Թառումյանին զրկել անօրինական ճանապարհով ձեռք բերած մուլքադարական իրավունքից։ Մոտ կես դար է տևում Դարալագյազի շրջանի 7 գյուղերի և կալվածատեր Թառումյանների պայքարը։ Պետական օրգանների կողմից մի շարք

անգամներ քննվում է այդ հարցը։ Շրջանի հայ և ադրբեջանական գյուղերի բնակիչները համայնքներով և անհատապես միահամուռ կերպով վկայություն են տալիս ընդդեմ կալվածատիրոջ։ 1846 թ. հուլիսին Դարալագյազի գավառապետին գրած դիմումի մեջ գյուղացիները բողոքելով Թառումյանի դեմ, խնդրում են «օրենքով թույլ չտալ, որ նա յոթ գյուղ զավթի, եթե ոչ նա իր զորությամբ կամաց-կամաց ամբողջ մահալին կտիրանա»։

Ուշագրավ է, որ Դարալագյազի շրջանի գյուղացիների պայքարը չէր սահմանափակվում միայն Թառումյանի և ուրիշ անհատ կալվածատերերի դեմ ունեցած ելույթներով, այլ ընդունում էր հակամուլքադարական-հակաֆեոդալական բնույթ։ Իրենց վկայություններում մեջ գյուղացիները ասում են. «Մենք ամենևին չենք լսել և չենք տեսել , որ Դարալագյազում մուլք եղած լինի»։

19-րդ դարի առաջին կեսին գյուղացիական շարժումներին ակտիվ մասնակցություն են ունենում նաև Հայաստանում ապրող ադրբեջանական գյուղացիները։ Նրանք հայ գյուղացիների հետ համերաշխ պայքարի են դուրս գալիս իրենց ընդհանուր դասակարգային թշնամիների՝ խաների, բեկերի, աղալարների ու մելիքների դեմ։

1840-ական թվականներից սկսած Երևանի գավառի Գյոքչայի մահալի Զոդ. Մեծ-Մապրա, Փոքր-Մապրա, Չախրլու և Ղոշա-Բուլաղ գյուղերի բնակիչները հրաժարվում են իրենց աղալարների համար ծառայություն կատարելուց։ Գյուղացիների ներկայացուցիչները գնում են Թիֆլիս, փոխարքա Վորոնցովին բողոքում աղալարների ապօրինի պահանջների և ծանր հարկերի դեմ, հայտնում են, որ աղալարները կեղծ փաստաթղթերի վրա են կալվածատիրական իրավունք ձեռք բերել և խնդրում են նրանց վրկել այդ իրավունքից։ Փոխարքան մերժում է գյուղացիների պահանջները, բայց նրանք չեն դադարեցնում իրենց պայքարը աղալարների դեմ։

1840—1850-ական թվականներին գյուղացիական շարժումները լայն ծավալ են ստանում նաև Արարատյան դաշտի գյուղերում։ Այստեղ ևս գյուղացիներն ակտիվ մասնակցություն էին ունենում հողատեր-կալվածատերերի դեմ մղվող ընդհանուր պայքարին։ Այս տեսակետից բնորոշ են Էջմիածնի, Սարդարապադի, Սուրմալուի և Ղամարլուի գավառների կալվածատիրական և պետական գյուղացիների պայքարը մուլքադարներ և թիուլիստներ Դավիթ Եղիազարովի, Արսեն Պապաջանովի, Մինաս Սուլթան Առաքելովի, Սարտիպ Մամեդ խանի, Ջաֆար խանի, Խան-Բաբա բեկի և ուրիշների դեմ։

Երևանի գավառի Սաֆիաբադ, Կարգաբազար, Ղամարլու, Վերին և Ներքին Խաթունարխ գյուղերի հայ և ադրբեջանցի բնակիչները 1840-ական թվականներից սկսած մի քանի տասնամյակ շարունակ հողի և ջրի համար սուր վեճերի մեջ էին գտնվում մուլքադար եղիազարովների հետ։ Գյուղական համայնքները բազմաթիվ դիմումներ ու բողոքներ են գրում տեղական իշխանություններին։ Տեղական չինովնիկները հաճախ կաշառվելով կալվածատերերի կողմից, ամեն կերպ աշխատում են խեղդել գյուղացիների արդար բողոքը։ Բայց նրանք չեն լռում. դիմում են Կովկասի փոխարքային և նույնիսկ թագավորին։ 1840—1850-ական թվականներին նման բողոքները մասսայական այնպիսի չափեր են ընդունում, որ Կովկասի փոխարքան տեղական իշխանություններին հատուկ կարգադրություն է անում արգելել գյուղացիներին, որպեսզի նրանք իրենց անվերջ բողոքներով «չանհանգստացնեն իշխանության վերադաս օրգաններին»։

19-րդ դարի առաջին կեսում գյուղացիական հուզումներ և ելույթներ են տեղի ունենում նաև Էջմիածնի, Մանահնի, Տաթևի վանքապատկան կալվածքներում, Զանգեզուրի շրջանի Վերին Թաղավար, Տեղ ու Բանաղուր գյուղերում և այլ վայրերում։ Ճիշտ է, այս շրջանում խոշոր ելույթներ, զինված ապստամբություններ տեղի չունեցան, բայց գյուղացիների պայքարը հողի և ազատության համար ավելի համառ ու տևական բնույթ ստացավ, ոտքի հանելով ինչպես կալվածատիրական, այնպես էլ պետական գյուղացիների նորանոր շերտեր, ուղի հարթելով 19-րդ դարի երկրորդ կեսի գյուղացիական շարժումների, հողատեր-կալվածատերերի ու ցարիզմի դեմ աշխատավոր գյուղացիության մղած դասակարգային սուր պայքարի համար։

ԱՐԵՎՄՏՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԸ 1830—1850 ԹԹ.

Սոցիալ-տնտեսական պայմանները։— *1828—1829 թթ. ռուս-թյուրքական պատերազմը Արևմտյան Հայաստանի սոցիալ-տնտեսական կյանքում աչքի ընկնող փոփոխություններ չմտցրեց։ Մնալով հետամնաց ֆեոդալական Թյուրքիայի տիրապետության տակ, Արևմտյան Հայաստանն ընկավ քաղաքական և տնտեսական ավելի ծանր պայմանների մեջ։*

Հետպատերազմյան շրջանում թյուրքական կառավարությունը ուժեղացրեց իր ճնշումներն ու հալածանքները հայերի նկատմամբ։ Պատերազմի տարիներին քայքայված տնտեսությունը, ավերված գյուղերն ու քաղաքները գրեթե չվերականգնվեցին։ Էրզրումի, Կարսի և Բայազետի շրջանների հայերի մասսայական գաղթը Արևելյան Հայաստան, իր հերթին զգալի հարված հասցրեց Արևմտյան Հայաստանի, առանց այգ էլ հետամնաց, էկոնոմիկային։

Այն ժամանակ, երբ Արևելյան Հայաստանը Ռուսաստանի տիրապետության տակ անցնելով, թևակոխեց զարգացման նոր շրջան, Արևմտյան Հայաստանը, ընդհակառակը, բռնեց հետադիմության ու անկման ուղին։ Այլ կերպ էլ լինել չէր կարող, քանի որ այդ շրջանում ամբողջ Թյուրքիան ֆեոդալական հարաբերությունների լճացման ու դեգրադացիայի պրոցես էր ապրում և գլորվում դեպի անկում։

Թյուրքիայի ֆեոդալական կարգերի ճգնաժամը ամենից ավելի ծանր էր անդրադառնում նվաճված քրիստոնյա ժողովուրդների՝ հայերի, հույների, սերբերի, բուլղարների և ուրիշների վրա։ Ճիշտ է, թյուրքական կառավարությունը հարկադրված որոշ փորձեր կատարեց ռեֆորմների միջոցով այդ ճգնաժամից դուրս գալու համար։ 1839 թ. նոյեմբերի 3-ին հրատարակվեց Խաթը-Շերիֆ կոչվող Թանզիմաթը (բարենորոգումների հրովարտակ), որը բոլոր հպատակներին, առանց կրոնի ու ազգության խտրության, խոստանում էր կյանքի ու գույքի ապահովություն, հարկերի հավասար բաշխում, զինվորական ծառայության և դատական գործի բարելավում։ Բայց այս խոստումները մնացին թղթի վրա որպես մեռած տառ։ 1839 թվականի Թանզիմաթը էական փոփոխություններ չմտցրեց Թյուրքիայի տնտեսական-քաղաքական կյանքում։ Նա չբարելավեց և չէր էլ կարող բարելավել ինչպես թուրք ժողովրդի, այնպես էլ սուլթանական բռնակալության լծի տակ հեծող քրիստոնյա ժողովուրդների դրությունը։ Թյուրքիայի քայքայվող ու փտող ֆեոդալական կարգերում աշխատավորական մասսաների, հատկապես գյուղացիության դրությունը գնալով ավելի ու ավելի էր վատանում։

Արևմտահայ գյուղացիների դրությունը։— Արևմտահայերի ճնշող մեծամասնությունը զբաղվում էր գյուղատնտեսությամբ։ Գյուղատնտեսություն ինչպես ամբողջ Թյուրքիայում, այնպես էլ Արևմտյան Հայաստանում գտնվում էր չափազանց հետամնաց վիճակում։ Գյուղատնտեսական աշխատանքը կատարվում էր պրիմիտիվ գործիքներով։ Գյուղացիներից շատերը միջոցներ չունենալու հետևանքով, նույնպես զուրկ էին այդ գործիքներից։ Չափազանց ցածր էր աշխատանքի արտադրողականությունը։ Ոչ մի ստիմուլ չկար աշխատանքի արտադրողականության բարձրացման համար։

Սուլթանական կառավարությունը և տեղական շահագործողները անխնա կերպով հափշտակում էին գյուղացու աշխատանքի արդյունքը։ Գյուղացիները գտնվում էին Սուլթանական կառավարության և տեղական շահագործողների կրկնակի լծի տակ։ Ով ասես, որ չէր ճնշում ու շահագործում արևմտահայ գյուղացուն, չէր հափշտակում դառն քրտինքով ձեռք բերած նրա վաստակը։ Սուլթանական կառավարությունը, թուրք փաշաները, քուրդ բեկերն ու աղաները, կապալառուներն ու հարկահավաքները, հայ հոգևորականներն ու վաշխառուները տզրուկի նման ծծում էին գյուղացու աշխատանքի հյութը, ապրում նրա հաշվին։

Արևմտահայ գյուղացիները, ինչպես և թյուրքական լծի տակ գտնվող բոլոր քրիստոնյաները, համարվում էին ռայա, այսինքն՝ իրավազուրկ հպատակներ։ Նրանք զուրկ էին քաղաքացիական ամենատարրական իրավունքներից, կյանքի ու գույքի ապահովությունից։ Նրանք իրավունք չունեին լավ հագնվել կամ ձի նստել, իսկ զենք կրելու համար ենթարկվում էին մահապատժի։ Հաճախ էր պատահում, որ ոստիկանները և զինվորները՝ հայ գյուղերը շրջելիս, օրը ցերեկով խլում էին գյուղացիների ունեցվածքը, փշացնում նրանց ցանքերն ու այգիները, առևանգում կանանց ու աղջիկներին։ Հայ գյուղացին կարող էր մի օրում կորցնել այն ամենը, ինչ ձեռք էր բերել երկար տարիների չարքաշ աշխատանքով։

Սուլթանական Թյուրքիայում տիրող ռազմա-ֆեոդալական կարգերում, ճիշտ է, հողը համարվում էր պետական սեփականություն, բայց այն փաստորեն կենտրոնացված էր բարձրաստիճան զինվորական ու քաղաքացիական պաշտոնյաների, թուրք փաշաների, քուրդ բեկերի և մասամբ հայ կալվածատերերի ու բարձր հոգևորականության ձեռքում։

Գյուղացին զուրկ էր հողից։ Նա մշակում էր պետության, կալվածատերերին ու մզկիթներին պատկանող հողերը, իսկ արդյունքի մեծ մասը յուրացնում էին հողատեր-կալվածատերերը։

Գյուղացիների վրա էին ծանրացած գրեթե բոլոր հարկերն ու տուրքերը։ Նրանք վճարում էին աշար կոչված նատուրալ հարկ, որը օրենքով պետք է կազմեր բերքի մեկ տասերորդ մասը, բայց իրականում հասնում էր 40—50 տոկոսի։ Կառավարությունը աշարը աճուրդով վաճառում էր կապալառուներին։ Մեծ կապալառուները, որոնք սովորաբար լինում էին բարձր պաշտոնյաներից, դնելով նահանգների աշարը, իրենց հերթին, առանձին շրջանների աշարը ավելի բարձր դներով վաճառում էին մանր կապալառուներին։ Այդպես աշարի կապալը ընկնում էր մի քանի ձեռք։ Հնձի ժամանակ կապալառուները, ոստիկանների ուղեկցությամբ շրջում էին գյուղերը և որոշում բերքի չափը։ Գյուղացին իրավունք չուներ իր արտը հնձել առանց կապալառուի թույլտվության։ Կապալառուները

և նրանց ուղեկցող ոստիկանները ապրում էին գյուղացիների հաշվին և շատ կամայականություններ ու վեղծարարություններ էին կատարում։ Աշարի գանձման այդ սիստեմը չափազանց հարստահարիչ էր գյուղացիների համար։

Աշարից բացի՝ գյուղացիները վճարում էին գլխահարկ (խարաջ), փինվորական հարկ, անասունների, արուտավայրերի, ճանապարհների և բազմաթիվ այլ հարկեր ու տուրքեր։ Հարկերի մի մասը գանձվում էր բնամթերքով, մի մասը՝ դրամով։ Հարկերից բացի, գյուղացիներն իրենց գործիքներով ու անասուններով կոռ էին կատարում կալվածատիրոջ համար։

Ավելի ծանր էր թուրք փաշաների ու քուրդ բեկերի հողերի վրա ապրող գյուղացիների դրությունը։ Թյուրքիայում առհասարակ օրենքը ուժ չուներ, իսկ ռազմա-ֆեոդալական վերնախավի՝ փաշաների, բեկերի ու աղաների համար ոչ մի օրենք գոյություն չուներ։ Նրանք հայ գյուղացիներին դրել էին կատարյալ ճորտական ու ստրկական վիճակում և շահագործում, կեղեքում էին այնքան, որքան իրենք էին կամենում։

Այսպես, օրինակ, Վանի փաշաների մասին պատմական աղբյուրները վկայում են, թե ինչպես նրանք հայ բնակիչներից տարեկան մի քանի անգամ ապօրինի հարկեր ու տուրքեր էին գանձում։ Երբեմն չբավականանալով նույն տարվա հարկերով, նրանք բռնագանձում էին նույնիսկ հաջորդ տարիների հարկերը, մինչև որ իրենք էլ էին՝ համոզվում, որ գյուղացիները այլևս անկարող են վճարել։

Արևմտյան Հայաստանում գոյություն ուներ հողազուրկ-սեփականազուրկ գյուղացիների մի ստվար մասսա, որը կոչվում էր մարաբա։ Մարաբաներն ապրում էին աղաների հողի վրա, աղայից ստանում էին սերմ, լծկան և գործիքներ, մշակում էին հողը և բերքի $^2/_3$-ը հանձնում աղային։ Բացի այդ՝ մարաբա կոչվող գյուղացիները, իրենց ընտանիքներով հանդերձ, աղայի համար կատարում էին նաև տնային ու դաշտային այլ աշխատանքներ, որ կոչվում էր օլամ։

Վանի, Շատախի, Մոկսի, Բիթլիսի, Մուշի, Սասունի և Դիարբեքիրի շրջաններում քուրդ հողատեր-կալվածատերերը՝ խաֆիրները, գյուղացիներին իրենց ընտանիքի, գույքի հետ նվիրում և վաճառում էին ուրիշի։ Քուրդ ցեղապետները, բեկերն ու շեյխերը, իրենց փինված բանդաներով, կատարյալ պատուհաս էին հանդիսանում հայ գյուղացիների համար։ Նրանք հաճախակի յարձակումներ էին գործում հայկական գյուղերի վրա, կոտորում էին խաղաղ բնակիչներին, առևանգում կանանց ու աղջիկներին, կողոպտում նրանց գույքը, եկեղեցիներն ու վանքերը։ 1840-ական թվականներին Վանի, Դիարբեքիրի և Տարոնի գավառներում իրենց այդօրինակ սանձարձակ գործողություններով առանձնապես հայտնի էին դարձել Մահմուդ խանի, Բեռերխան բեյի և Զփլաշեյխի փինված բանդաները։ Օգտվելով Վանի և Կարինի կուսակալների հովանավորությունից, նրանք անպատիժ ասպատակում էին հայկական գյուղերը։

Առհասարակ ամբողջ Թյուրքիայում և մասնավորապես Հայկական վիլայեթներում կամ այլայեթներում ներքին դժգոհությունները և ավազակային հարձակումները լայն չափեր էին ընդունել։ 19-րդ դարի առաջին կեսում, ինչպես խոստովանում են հենց իրենք, թուրքական աղբյուրները, նման դեպքերը «ընդգրկում էին ամբողջ այլայեթներ և սանջակներ»։ Կառավարությունն ինքը հաճախ չէր կարողանում զսպել ավազակային այդ բանդաներին։

Սուլթանական Թյուրքիայի տնտեսական, քաղաքական և ազգային դա-

ժան ճնշումներն ու հալածանքները, գյուղատնտեսության անկումը, պարբերաբար կրկնվող անբերրիությունը, սովն ու համաճարակը, տարեց տարի աճող պանդխտությունը անօրինակ ծանր դրություն էին ստեղծել արևմտահայ գյուղացիության համար։

Արհեստներն ու առևտուրը։— Բացի գյուղատնտեսությունից՝ Արևմտյան Հայաստանի բնակչության որոշ խավերը զբաղվում էին արհեստներով ու առևտրով։ Արհեստի գրեթե բոլոր ճյուղերն էլ բավականաչափ տարածված էին Արևմտյան Հայաստանում, քանի որ երկրում իսպառ բացակայում էին ֆաբրիկա-գործարանները և բնակչությունն իր առօրյա կարիքները բավարարում էր արհեստի արտադրանքներով։

Արհեստավորները գերազանցապես մշակում էին երկրի սեփական հումքը։ Արևմտյան Հայաստանն ընդհանրապես շատ հարուստ էր, բայց այդ հարստության չնչին մասն էր մշակվում։ Մանավանդ երկրի ընդերքի հարստությունները մեծ մասամբ մնում էին անօգտագործելի։ Սուլթանական կառավարությունը բնավ հոգ չէր տանում այդ մասին, իսկ ժողովրդի հնարավորությունները խիստ սահմանափակ էին։

Արհեստավորներն զգալի թիվ էին կազմում Էրզրումում, Վանում, Բիթլիսում, Սեբաստիայում, Մանազկերտում, Մուշում և այլ քաղաքներում։ Նրանք զբաղվում էին ջուլհակությամբ, դերձակությամբ, ներկարարությամբ, հյուսնությամբ, դարբնությամբ, քարտաշությամբ, մետաքսագործությամբ, պղնձագործությամբ, ոսկերչությամբ և մի շարք այլ արհեստներով։ Իրրև կանոն յուրաքանչյուր արհեստ զբաղեցնում էր առանձին փողոց կամ թաղամաս, որը նույն արհեստի անունով էլ կոչվում էր։ Օրինակ, Էրզրումում պղնձագործներն ու երկաթագործները զբաղեցնում էին մի ամբողջ պողոտա։ Վանում առանձին թաղամասեր ու բազմաթիվ կրպակներ ունեին ոսկերիչներն ու արծաթագործները, ինչպես և ջուլհակներն ու ներկարարները։ Բիթլիսում 19-րդ դարի 50-ական թվականներին կար 24 ներկարան, որտեղ տորոնով ընտիր ներկեր էին անում և 400 դազգահ, որոնցով սպիտակ կտավ, չիթ և այլ կտորներ էին գործում։ Այնտեղ, տղամարդկանց և կանանց հետ միասին, արհեստանոցներում աշխատում էին նաև մեծ թվով երեխաներ։

Արհեստի արտադրանքը, ինչպես և գյուղատնտեսական մթերքները, վաճառքի էին հանվում ամենից առաջ տեղական շուկաներում և ապա արտահանվում այլ շրջաններ ու մինչև իսկ հեռավոր երկրներ։

Արևմտահայ վաճառականներն ու արհեստավորները, ամբողջ Թյուրքիայի առևտրի ու արհեստների մեջ աչքի էին ընկնում և առաջատար դեր էին կատարում։ Էրզրումից, Վանից, Բիթլիսից հայ վաճառականները տեղական արտադրանքները վաճառահանում էին Պարսկաստան, Ռուսաստան, Արևմտյան Եվրոպա, գլխավորապես Ֆրանսիա և մի շարք այլ երկրներ։ Նրանք Մոսկվա, Մարսել և ուրիշ քաղաքներ էին տանում մետաքս, տորոն, ծխախոտ, լուրդ, բամբակ, խեժ, ընկույզի կոճղներ և այլն։

Բիթլիսցիք, իրենց ազնիվ ու ոսկեթել մետաքսյա դիպակը տեղական շուկայից բացի, վաճառքի էին հանում Տարոնի, Բուլանուխի, Վանի, Էրզրումի և այլ գավառներում։

Էրզրումը, որն Արևմտյան Հայաստանի աչքի ընկնող առևտրական ու արհեստագործական կենտրոններից էր, նույնպես ակտիվ մասնակցություն էր ունենում Թյուրքիայի ներքին և արտաքին առևտրին։ Էրզրումի հայ վաճառա-

կանները արևելյան ապրանքներ էին տանում Ֆրանսիա, Հոլանդիա, Անգլիա, Ռուսաստան, իսկ այնտեղից բերում ֆաբրիկա-գործարանային ապրանքներ։

Թյուրքական կառավարությունը մեծ մաքսեր էր գանձում վաճառականներից, սակայն առևտրի զարգացմանը այնքան այդ մաքսերը չէին վնասում, որքան Թյուրքիայում տարածված «առևտրի եղանակը»— կարավան կտրելը։ Թյուրքական կառավարությունը ոչ միայն չէր մտահոգվում 1839 թվականի Թանզիմաթով հպատակներին խոստացած կյանքի և գույքի ապահովության մասին, այլև ամենից առաջ և ամենից ավելի ինքն էր ոտնահարում հպատակների իրավունքները, հարստահարում ու կողոպտում ժողովրդի լայն զանգվածներին։

Պոլսի հայ գաղութը։— Կոստանդնուպոլիսը, որը Հայկական հնագույն գաղութներից մեկն էր, 19-րդ դարի կեսերին, դարձել էր արևմտահայերի տնտեսական, քաղաքական և կուլտուրական խոշոր կենտրոն։ Կոստանդնուպոլսում ապրում էին հասարակական տարբեր շերտերի պատկանող ավելի քան երկու հարյուր հազար հայեր։ Այդտեղ էր գտնվում արևմտահայ հոգևոր կենտրոն՝ Պատրիարքարանը։ Բոսֆորի շահաբեր երկու ափերին էին ծվարել հայ ամիրաները, սարաֆները, առևտրա-վաշխառուական կապիտալի ներկայացուցիչները։ Այդտեղ էին կենտրոնացած հայ արհեստավորները, պանդուխտ մշակները, արևմտահայ ինտելիգենցիան։ Պոլսի հայ համայնքի այսօրինակ խայտաբղետ սոցիալական կազմը, իր կնիքն էր դնում նրա հասարակական-քաղաքական և կուլտուրական գործունեության վրա։

Ամիրաներն ու սարաֆները, իրենց կապիտալի ու ճարպիկ գործարարության շնորհիվ ազդեցիկ դիրք էին ձեռք բերել և ակտիվ դեր էին խաղում երկրի ոչ միայն տնտեսական, այլև քաղաքական կյանքում։ Նրանցից մի քանիսը ժառանգաբար իրենց ձեռքում էին պահում արքունի դրամահատության (Տյուզյան), վառոդապետության (Տատյան) և ճարտարապետության (Պալյան) պաշտոնները։ Տնտեսական շահերով, պաշտոններով կապված լինելով թյուրքական կառավարության հետ, ամիրաներից ու սարաֆներից շատերը փաստորեն հանդիսանում էին թյուրքական կառավարության գործակալները և անխնա կերպով շահագործում, ճնշում էին հայ աշխատավորությանը։ Օգտվելով սուլթանական կառավարության ֆինանսական ճգնաժամից և թուրք բուրժուազիայի թուլությունից, հայ առևտրա-վաշխառուական տարրերը, հույների հետ միասին, իրենց ձեռքն էին վերցրել ոչ միայն Պոլսի, այլև գրեթե ամբողջ Թյուրքիայի առևտուրը։

Պոլսահայ համայնքի ամենաբազմամարդ խավը, աշխատավորական խավն էր, որը կազմված էր արհեստավորներից, պանդուխտ մշակներից և սեզոնային բանվորներից։ Պոլիսը հայ արհեստավորության աչքի ընկնող կենտրոններից էր։ 19-րդ դարի կեսերին այնտեղ 65 էսնաֆություն (համքարություն) կար։ Պոլսում և Պոլսից դուրս մեծ համբավ ունեին հայ ոսկերիչները, ակնագործները, որմնադիրները, քանդակագործները և մետաքսագործները։ Արհեստավորությունն այստեղ ևս, ինչպես ամբողջ Արևմտյան Հայաստանում, միատարր չէր։ Ցածր խավը մշտապես ենթակա էր վերին խավի և սուլթանական կառավարության ճնշմանն ու շահագործմանը։ Նրանք գտնվում էին նյութական դժվարին պայմաններում։

Ավելի ծանր էր պանդուխտների, մշակների և սեզոնային բանվորների դրությունը։ Պանդուխտները Պոլիս էին գալիս մեծ մասամբ Արևմտյան Հայաստա-

նից։ Դրանք քայքայված, աղքատացած գյուղացիներ էին և արհեստավորներ, որոնք միայնակ, երբեմն էլ ընտանիքով, Պոլիս էին չվում մի կտոր հաց վաստակելու, իրենց մերկությունը ծածկելու և կամ կառավարության ու վաշխառուի պարտքերը մարելու համար։ Հոծ բազմություններով նրանք ապրում էին Պոլսի խաներում, մութ ու խոնավ նկուղներում, կեղտի, մրի ու գարշահոտության մեջ։ Պանդուխտներից շատերը չդիմանալով կյանքի այդ դժնդակ պայմաններին, մեռնում էին օտարության մեջ, հարապատների ու հայրենիքի կարոտը սրտերում։

Այս տեսակետից շատ բնորոշ է Իփլիկ խանե կոչված ֆաբրիկայում աշխատեցնելու համար 1832 թվականին հավաքած 6000 հայ պատանիների ու երիտասարդների տխուր պատմությունը։ 12 տարվա ընթացքում, 1832—1844 թթ. դրանցից ավելի քան 1000 հոգի խեղդվում են նավի ընկղման պատճառով, մոտ 1000 հոգի փախչում են ապատվում, 3400 հոգի մեռնում են չարաչար տանջվելով և միայն 600 հոգի են կենդանի մնում՝ խղճալի ու վշտալի վիճակում։

Պոլսահայ դեմոկրատիայի իրավական ու տնտեսական ծանր դրությունը նրան պայքարի էր հանում սուլթանական կառավարության և ազգային կեղեքիչների դեմ։ 19-րդ դարի երկրորդ քառորդից սկսած այդ պայքարն ավելի ու ավելի էր խորանում և դասակարգային ու ազատագրական սուր պայքարի բնույթ ստանում։

Պոլսի հայ համայնքի մեջ փոքր տեղ չէր գրավում նաև ինտելիգենցիան։ 1840—1850-ական թվականներից սկսած Պոլիսը դառնում էր արևմտահայ կուլտուրայի, գիտության, գրականության և արվեստի կենտրոն։ Այդտեղ, և մասամբ Զմյուռնիայում էր կենտրոնանում հայ գրքի տպագրությունը, թերթերի ու ժուռնալների հրատարակությունը, կուլտուր-կրթական հիմնարկները։ Բուն երկիրը՝ Արևմտյան Հայաստանը, ինչպես Թյուրքիայի անխտիր բոլոր գավառները, մնում էր խավարի թագավորության մեջ։

Պոլսի հայ գաղութը զերծ չէր և չէր կարող զերծ լինել արտաքին ազդեցությունից։ Լինելով Թյուրքիայի մայրաքաղաքը, Պոլիսը միաժամանակ, ինչպես Կ. Մարքսն է ասում, ոսկե կամուրջ էր Արևելքի և Արևմուտքի միջև։ Օգտագործելով թյուրքական լծի տակ գտնվող հայերի, ինչպես և քրիստոնյա մյուս ժողովուրդների ծանր դրությունը, եվրոպական ու ամերիկյան գաղութարարները քրիստոնեական կրոնը պաշտպանելու և քաղաքակրթություն տարածելու պատրվակով, աշխատում էին նրանց գցել իրենց ազդեցության տակ և օգտագործել իրենց նվաճողական նպատակների համար։ Թյուրքիայի և ամբողջ Մերձավոր Արևելքի վրա իրենց թաթը դնելու համար, այսպես կոչված, մեծ տերությունները գործի էին դնում ոչ միայն իրենց զենքը, դրամները, խարդախ դիվանագիտությունը, այլև կրոնական պրոպագանդան։ Նրանք մեծ թվով միսիոներներ էին ուղարկում Արևելք, կաթոլիկ և բողոքական ընկերություններ կազմակերպում, կրոնական դպրոցներ բացում և այլն։ Այդպիսի խարդախ ճանապարհներով անգլո-ամերիկյան և ֆրանսիական միսիոներներին հաջողվել էր արևմտահայերի մեջ ևս կաթոլիկ ու բողոքական համայնքներ հիմնել, կրոնա-դավանաբանական զազրելի վեճեր ու պայքար հրահրել, պահակտել ու ջլատել նրանց առանց այդ էլ թույլ ուժերը։

1844 թվականին Կ. Պոլսից կաթողիկոսին հայտնում են, որ Պոլսի մոտ Պեպեկ կոչված գյուղում ամերիկացի բողոքական վարդապետները պրոպագան-

դի համար կրոնական դպրոց հն րացել և հայերից շատերին գրավել իրենց կողմը։ Պատրիարքը ոչ մի կերպ չի կարողանում արգելել կամ խոսել, որովհետև անգլիական դեսպանը հովանավորում է նրանց։ Տերությունն իսկ չի կամենում հակառակվել անգլիական դեսպանի կամքին։ Պատրիարքը շվարել էր և չգիտեր, թե ինչ կերպ կարելի է վերացնել այս չարիքը։

Անգլիական, ամերիկյան և ֆրանսիական միսիոներների պրոպագանդան, նրանց հրահրած դավանաբանական պայքարը հայերի մեջ այնպիսի սպառնալից բնույթ էր ընդունել, որ 1844 թ. սերսես կաթողիկոսը հատուկ կոնդակով դիմում է հայ ժողովրդին և կոչ անում միաբան լինել։ «Զանազան եվրոպական ազգեր... ուրախանում են հայ ժողովրդի դժբախտ վիճակի համար»,— գրում է նա և զգուշացնում հետու մնալ այդ վնասակար ազդեցությունից։

19-րդ դարի առաջին կեսում Պոլսի, ինչպես և Զմյուռնիայի ու Թյուրքիայի այլ վայրերի հայ բնակչության կյանքը ընթանում էր դասակարգային ու ազատագրական պայքարի և միջազգային հակամարտությունների սրման բարդ պայմաններում։ Արևմտահայ աշխատավորությունը հարկադրված էր իր պայքարն ուղղել ոչ միայն ազգային շահագործողների ու սուլթանական բռնակալության, այլև եվրոպական գաղութարարների դեմ, իր բախտը կապելով Ռուսաստանի և Արևմտյան Եվրոպայի դեմոկրատական շարժումների հաղթանակի հետ։

ՀԱՅԿԱԿԱՆ ԿՈՒԼՏՈՒՐԱՆ 19-ՐԴ ԴԱՐԻ ԱՌԱՋԻՆ ԿԵՍՈՒՄ

Հայկական կուլտուրայի օջախները։— 19-րդ դարի առաջին կեսում Հայկական կուլտուրան գտնվում էր իր զարգացման համեմատաբար ցածր մակարդակի վրա։

Հայ ժողովուրդը, որ հին ժամանակներից սկսած ստեղծել էր կուլտուրայի համաշխարհային նշանակություն ունեցող կոթողներ, Թյուրքիայի և Իրանի լծի տակ ընկնելով զրկվել էր ոչ միայն կուլտուրական նոր արժեքներ ստեղծելու, այլև հինը պահպանելու հնարավորությունից։ Նա խարխափում էր անգրագիտության ու խավարի մեջ։

Բայց, նթե հետամնաց Թյուրքիայի ու Իրանի լծի տակ հայկական կուլտուրան իր անկումն էր ապրում, ապա երկրից դուրս՝ Ռուսաստանում և Եվրոպայի ու Ասիայի հայկական գաղութներում 18-րդ դարի վերջերից և 19-րդ դարի սկզբներից սկսած կուլտուրական կյանքը նկատելի կերպով առաջադիմում է։

Կուլտուրական կյանքի աշխուժացումն առանձնապես դգալի է լինում Ռուսաստանի հետ Հայաստանի միացումից հետո, որն արդյունք էր ռուսական կուլտուրայի բարերար ազդեցության։

Հայկական կուլտուրայի աչքի ընկնող օջախներից էին Մոսկվան, Թիֆլիսը, Աստրախանը, Նոր Նախիջևանը, ինչպես նաև Վենետիկը, Կոստանդնուպոլիսը և Կալկաթան։ Նշված կուլտուրական օջախներում հիմնվել էին տպարաններ և հրատարակվում էին հայերեն գրքեր, թերթեր ու ժուռնալներ։

Մամուլ։— 19-րդ դարի առաջին կեսում հրատարակվում էին մոտ 30 անուն հայկական թերթեր ու ժուռնալներ, բայց բոլորն էլ Հայաստանից դուրս։ Հրատարակվող գրքերի ու թերթերի բովանդակությունը գերազանցապես կրոնա-բարոյախոսական էր, լեզուն՝ գրարար, ժողովրդի համար անմատչելի։

ժողովրդին հուզող տնտեսական-քաղաքական հարցերը մամուլում գրեթե չէին արծարծվում։ Թերթերն ու գրքերը կտրված էին մասսայից, տարածվում էին շատ նեղ, սահմանափակ շրջանում։

Այդ շրջանի քիչ թե շատ հայտնի թերթերից էին «Տարեգրություն», «Եղանակ բյուզանդյան» և «Բազմավեպ» (Վենետիկ), «Հայելի կալկաթյան», «Շտեմարան» և «Ազգասեր» (Կալկաթա), «Լրո-Գիր» (Պոլիս), «Արշալույս Արարատյան» (Զմյուռնիա), «Կովկաս» (Թիֆլիս) և այլն։

Դպրոց։— 19-րդ դարի առաջին կեսում գլխավորապես Ռուսաստանի տիրապետության տակ գտնվող հայերը հիմնում են մի շարք դպրոցներ, որոնք նշանակալից դեր են խաղում հայ ժողովրդի մտավոր զարգացման գործում։

1810 թ. Աստրախանում բացվում է Աղաբաբյան դպրոցը, 1815 թ. Մոսկվայում՝ Լազարյան ճեմարանը, 1824 թ. Թիֆլիսում՝ Ներսիսյան դպրոցը, 1832 թ. Երևանում՝ Գավառական դպրոցը, 1837 թ. Երևանի, իսկ 1838 թ. Շուշու թեմական դպրոցները և այլն։ Հայկական դպրոցներ են բացվում նաև Վենետիկում, Կալկաթայում, Կոստանդնուպոլսում, Զմյուռնիայում, Փարիզում և այլ տեղերում։ Բացի այս դպրոցներից, Հայաստանի առանձին շրջաններում ու գյուղերում բացվում են նաև ծխական դպրոցներ, որոնք, սակայն, գտնվում էին շատ անմխիթար վիճակում։ Տեր-Թոդիկյան տիպի այդ դպրոցներում երեխաներին ավելի շատ ծեծ էին տալիս, քան թե ուսում։

Վերը հիշված դպրոցներից հայ իրականության մեջ ամենից ավելի աչքի ընկնող դեր են խաղացել Մոսկվայի Լազարյան ճեմարանը և Թիֆլիսի Ներսիսյան դպրոցը։

Կովկասում բարձրագույն դպրոց չհինելու հետևանքով, առանձին հայ երիտասարդներ սկսում են գնալ Ռուսաստան (Մոսկվա, Պետերբուրգ, Դորպատ) և Արևմտյան Եվրոպա՝ բարձրագույն կրթություն ստանալու համար։ Ռուսաստանում և Եվրոպայում կրթություն ստացած հայ ինտելիգենտների այդ առաջին սերունդը (Խ. Աբովյան, Հ. Ալամդարյան, Մ. Թաղիադյան, Ս. Նազարյան, Մ. Նալբանդյան, Ղ. Ալիշան, Ռ. Պատկանյան և ուրիշներ) աչքի ընկնող դեր խաղաց հայ նոր կուլտուրայի զարգացման գործում։

Գիտություն և արվեստ։— 19-րդ դարի առաջին կեսում որոշ քայլեր են կատարվում նաև գիտության ու արվեստի բնագավառում։ Պատմության, լեզվաբանության, բնագիտության, բժշկության և գիտության այլ ճյուղերի վերաբերյալ հրատարակվում են առանձին ուսումնասիրություններ։ Իրենց գիտական գործունեությամբ աչքի են ընկնում պատմաբան-աշխարհագրագետ Ղ. Ինճիճյանը (1768—1843), լեզվաբան Մ. Ավգերյանը (1762—1854), բժիշկ Միքայել Րեստենը (1774—1844) և ուրիշները։

Ղ. Ինճիճյանը 1820—1830-ական թվականներին տպագրում է մի շարք պատմա-աշխարհագրական ուսումնասիրություններ (Ստորագրութիւն հին Հայաստանեայց, Հնախօսութիւն աշխարհագրական Հայաստանեայց աշխարհի և այլն), որտեղ փորձում է լուսաբանել հին Հայաստանի տնտեսական և քաղաքական պատմությունը։ 1849—51 թթ. Վիեննայում լույս է տեսնում Հ. Գաթրճյանի «Տիեզերական պատմություն» երկհատորյակը։ 1827 թ. Մոսկվայում լույս է տեսնում Արզանով եղբայրների «Опыт начертания истории царства Армянского» և 1832—1833 թթ. Սերգեյ Գլինկայի «Обозрение истории армянского народа» (երկու մասից) աշխատությունները՝ ռուսերեն լեզվով։

Ս. Գլինկայի այս աշխատությունը իր տեսակի մեջ առաջինն էր և շատ կողմերով ուշագրավ պատմագիտական մի ուսումնասիրություն էր։

1836—1837 թթ. Վենետիկում լույս է տեսնում, շուրջ 50 տարվա կոլեկտիվ աշխատանքի արդյունք հանդիսացող «Նոր Բառգիրք Հայկազյան լեզվի» երկու ստվար հատորից բաղկացած հայտնի բառարանը, որն այսօր չի կորցրել իր գիտական արժեքը։

Նկարչության բնագավառում իրենց գործերով հայտնի են դառնում Հովնաթանյան եղբայրները։ Կոստանդնուպոլսում և Թիֆլիսում թատերասեր ուսուցիչների և աշակերտների ուժերով ներկայացումներ են տրվում։ 1846 թվականին Կոստանդնուպոլսում հիմնվում է «Արևելյան թատրոնը»։ Թիֆլիսում սերտ կապեր են հաստատվում հայ, վրացի և ռուս թատերական գործիչների միջև։ Ուշագրավ է, որ 1832 թվականին Թիֆլիսում ռուս, վրացի և հայ թատերասերների ուժերով բեմադրվում է Ա. Ս. Գրիբոեդովի «Խելքից պատուհաս» պիեսը։ Մինչ այդ «Խելքից պատուհաս»-ի առաջին և հեղինակի ներկայությամբ միակ բեմադրությունը տեղի էր ունեցել Երևանում 1827 թվականին՝ նրա տաղանդի սիրահար և գաղափարակից դեկաբրիստ սպաների ջանքերով։

Գրականություն։— Մինչև հայ նոր գրականության սկզբնավորումը գրականության մեջ տիրող ուղղությունը կլասիցիզմն էր։ Կլասիցիզմի աչքի ընկնող ներկայացուցիչը հայ գրականության մեջ եղել է Արսեն Բագրատունին (1790—1861)։

Փոքր հասակից սովորելով կլասիկ լեզուներ, Ա. Բագրատունին թարգմանում է Հոմերոսի, Սոֆոկլեսի, Վիրգիլիոսի գործերը։ Թարգմանությունից բացի՝ Ա. Բագրատունին զբաղվում է նաև ինքնուրույն ստեղծագործությամբ։ Նրա գրչին է պատկանում 22 հազար տողից բաղկացած «Հայկ դյուցազն» պոեմը։ Պոեմի նյութը վերցված է Մովսես Խորենացու «Հայոց պատմության» մեջ եղած Հայկի ու Բելի առասպելից։

«Հայկ դյուցազն» պոեմը գրված է Հոմերոսի «Իլիական»-ի ազդեցության տակ, հայկական տաղարանների չափով։ Լեզուն խրթին գրաբար է, որը և գրեթե անհնարին է դարձնում մեծածավալ պոեմի ընթերցումը։

Կլասիցիզմը խոր արմատներ չի գցում հայ գրականության մեջ։ Շուտով նա տեղի է տալիս գրական նոր ուղղություններին՝ ռոմանտիզմին ու ռեալիզմին։

19-րդ դարի 20—30-ական թվականներից հայ գրականության մեջ սկսվում է նոր էտապ։ Դա կապված էր Անդրկովկասի տնտեսական ու քաղաքական կյանքում առաջացած նոր փոփոխությունների, առանձնապես Թյուրքիայի ու Իրանի լծից հայ ժողովրդի մի մասի ազատագրության ու Ռուսաստանի տիրապետության տակ անցնելու հետ։

Ռուսաստանի հետ կապվելով՝ հայ ժողովուրդը հնարավորություն էր ստանում շփվելու ռուսական և համաշխարհային կուլտուրայի հետ։ Հայ նոր գրականությունը կազմավորվում է կղերա-ֆեոդալական գրականության դեմ մղած պայքարում, ռուս առաջավոր գրականության բարերար ազդեցության պայմաններում։ Հայ դրականության այս նոր էտապի սկզբնավորումը կապվում է 19-րդ դարի առաջին կեսի ամենախոշոր գրող, մեծ դեմոկրատ-լուսավորիչ Խաչատուր Աբովյանի անվան հետ։

Մինչև Աբովյանը, հայ նոր դրականության զարգացման համար նախա-

պատրաստական զգալի աշխատանք են կատարել Հարություն Ալամդարյանը և Մեսրոպ Թաղիադյանը։

Հարություն Ալամդարյանը (1796—1834) ծնվել է Աստրախանում, սովորել է տեղի Աղաբարյան դպրոցում, ապա, տեղափոխվելով Մոսկվա, մոտ 10 տարի որպես ուսուցիչ աշխատել է Լազարյան ճեմարանում։ Այստեղ նա սովորում է մի քանի լեզուներ և հիմնավորապես ծանոթանում ռուսական ու արևմտաեվրոպական գրականությանը։ 1821 թվականին Մոսկվայում լույս է տեսնում նրա կազմած առաջին ռուս-հայերեն բառարանը, որը կուլտուրական խոշոր նվաճում էր իր ժամանակի համար։

1824 թվականին Ալամդարյանը Մոսկվայից տեղափոխվում է Թիֆլիս, որտեղ Ներսիսյան դպրոցում, որպես տեսուչ և ուսուցիչ աշխատում է մինչև 1830 թվականը։ Թիֆլիսում Ալամդարյանը ակտիվ մասնակցություն է ունենում կովկասահայերի հասարակական, քաղաքական և կուլտուրական գործերին։

Ալամդարյանը լիրիկ բանաստեղծ է։ Նա երգել է աշխարհիկ կյանքը, բնությունը, սերը։ Այս տեսակետից առավել արժեքավոր են նրա «Պարերգությունն», «Գարուն» և «Անուրջք» բանաստեղծությունները։ Նա գրել է նաև «Հրամիզդ և Ջենորիա» ողբերգությունը, որը չի տպագրվել։

Իր ստեղծագործության մեջ Ալամդարյանը հիմնականում հաղթահարելով կլասիցիզմը, այնուամենայնիվ չկարողացավ լիովին ազատագրվել նրանից։ Լեզվի հարցում նույնպես նա հանդես բերեց սահմանափակվածություն և գրաբարի շրջանակներից դուրս չեկավ։ Ալամդարյանի բանաստեղծությունները հավաքված են մի ժողովածուի մեջ, որը «Ձափաբերականք» վերնագրով 1884 թվականին տպագրվել է Պետերբուրգում։

Մեսրոպ Թաղիադյանը (1803—1858) հայ նոր գրականության ականավոր դեմքերից մեկն է։ Պատանի հասակում կորցնելով հորը, նա ընկնում է Էջմիածնի վանքը, սովորում վանական դպրոցում։ Ուսման ծարավի երիտասարդը ցանկանում է Եվրոպա գնալ, բայց ընկնում է Հնդկաստան։ 1826 թվականին մեծ դժվարությամբ ընդունվում է Կալկաթայի անգլիական հոգևոր դպրոցը և 1830 թ. ավարտում՝ ստանալով արվեստների մագիստրոսի կոչում։

Հայրենիքի սերը Թաղիադյանին հանգիստ չի տալիս։ 1831 թ. նա վերադառնում է հայրենիք՝ դպրոց ու տպարան բանալու, կրթություն և լուսավորություն տարածելու վառ հույսերով։ Էջմիածնի տգետ վանականները որոգայթներ են լարում նրա դեմ և խորտակում նրա հույսերը։ Երկար ժամանակ նա մնում է անգործ և օրվա հացի կարոտ։ Էջմիածնում Թաղիադյանը տեսնում է, թե ինչպես վանականները թքամանը դարձրել են թանաքաման։ Զայրացած այդ դեպքից, նա գրում է հետևյալ երգիծական քառյակը.

Երբ թքամանն թանաքաման,
Դարձել է, տես, հայս վեհարան,
Ջինչ այլ բնչ հույս երջանկության,
Փախիր փութով, Մեսրոպ Դավթյան։

1838 թ. Թաղիադյանը գնում է Կոստանդնուպոլիս, որտեղ զբաղվում է ուսուցչությամբ։ Բայց այստեղ էլ հայ կղերականները և ամիրաները նրան հանգիստ չեն տալիս։ 1839 թ. նա փախչում է Հնդկաստան։ Տասնութ տարի Հնդկաստանում մնալուց հետո Թաղիադյանը տեղափոխվում է Իրան։ Ճանապարհին նա ծանր հիվանդանում է և 1858 թ. վախճանվում Շիրազում։

Չնայած իր կյանքի այսօրինակ դժնդակ պայմաններին, Բաղիաղյանը դրական, դիտական ու մանկավարժական բեղմնավոր գործունեություն է ունեցել և մեզ թողել է գրական հարուստ ժառանգություն։ Նրա գրչին են պատկանում «Ճանապարհորդություն ի Հայս», «Պատմություն Պարսից», «Պատմություն Հնդկաց» պատմական ուսումնասիրությունները, «Դիցաբանություն», «Մեսրոպյան այբբենարան» դասագրքերը, Ռիչինալդ Հիրրի «Պաղեստին» պոեմի և այլ երկերի թարգմանությունները, իրեն խմբագրած «Ազգասեր» և «Ազգասեր Արարատյան» թերթերում տպագրված բազմաթիվ հոդվածներ։

Բացի այդ՝ Բաղիաղյանը գրել է նաև պոեմներ («Սոս և Սոնդիպի», «Թուրքակ Բաղիաղյան», «Եղերդություն ի Բանգա Բաղիաղյան») և վեպեր («Վեպ Վարդգեսի», «Վեպ Վարսենկան»)։

Բաղիաղյանի երկերը արվեստի տեսակետից այնքան էլ բարձրարժեք գործեր չեն։ Ինքը՝ հեղինակն էլ իր ժամանակին առանձին արժեք չի տվել դրանց, իրեն համարելով առավելապես մանկավարժ և գիտնական, քան գրող։ Բայց ինչպես էլ որ գնահատելու լինենք նրա ստեղծագործությունների գեղարվեստական արժեքը, այնուամենայնիվ անժխտելի է այն խոշոր դերը, որ նա խաղացել է կլասիցիզմը հաղթահարելու և հայ նոր գրականության համար ճանապարհ հարթելու ուղղությամբ։

Բաղիաղյանի մոտ առանձնապես գնահատելի է նրա ջերմ հայրենասիրությունը և այն քննադատական վերաբերմունքը, որ երևան է բերել ֆեոդալական կարգերի ու հայ կղերականության, ինչպես և արևմտաեվրոպական պետությունների գաղութարար քաղաքականության նկատմամբ։ Իր հոդվածներից մեկում, դիմելով հնդկահայերին՝ Բաղիաղյանն ասում է. «Մեր արմատը մեր հայրենիքն է... Ով ուզում է երջանիկ լինել, նա պետք է նախ և առաջ ձգտի հայրենիքի երջանկության»։

Ապրելով Հնդկաստանում, մոտիկից շփվելով հնդիկ ժողովրդի հետ, Բաղիաղյանը ջերմորեն պաշտպանում էր անգլիական գաղութարարների դեմ նրա մղած հերոսական պայքարը, հայերին կոչ էր անում ամրապնդել բարեկամական կապերը հնդիկ մեծ ժողովրդի հետ։

Նա առաջին հայ մանկավարժն էր, որ բարձրացրեց կանանց համար ղըպրոցներ բաց անելու հարցը։

Բաղիաղյանի ստեղծագործությունները զերծ չեն կլասիցիզմի ազդեցությունից։ Ինչ վերաբերում է լեզվին, պետք է ասել, որ նա, մասամբ միայն օգտագործելով աշխարհաբարը, հիմնականում պահեց գրաբարը։ Բաղիաղյանի այդ թերությունն իր ժամանակին նշել է ռևոլյուցիոն-դեմոկրատ Միքայել Նալբանդյանը, ցույց տալով, թե ինչպես նա, գործածելով հին և մեռած լեզուն, չի հասկացել, որ «խոսելու և գրելու խորհուրդը այն է, որ ժողովուրդը կարդա և բան հասկանա»։

Ո՛չ Ալամդարյանը և ո՛չ էլ Բաղիաղյանը չկարողացան լուծել նոր լեզվի և նոր դրականության ստեղծման բարդ ու դժվարին պրոբլեմները։ Այդ վիճակված էր նրանց հաջորդին՝ հայ նոր գրականության հիմնադիր, մեծ լուսավորիչ Խաչատուր Աբովյանին։

Խաչատուր Աբովյան *(1805—1848)*.— Խաչատուր Աբովյանը 19-րդ դարի առաջին կեսի հայ դրականության ամենանշանավոր դեմքն է։ Նա հայ նոր դրականության հիմնադիրն է, մեծ հայրենասեր, լուսավորիչ, դեմոկրատ։ Աբովյանը աչքի ընկնող հասարակական գործիչ է, տաղանդավոր վիպասան, բանա-

ստեղծ, առակագիր, թարգման, մանկավարժ, պատմաբան, լեզվաբան, ազգագրագետ։ Այս բոլոր բնագավառներում նա հանդես է եկել որպես նորարար։

Դուրս գալով ժողովրդի ծոցից, նա իր ամբողջ կյանքը նվիրում է ժողովրդի գործին, առաջին հերթին՝ խավարի թանձր քողով պատած իր հայրենի աշխարհում կրթություն և լուսավորություն տարածելու գործին։ Դիմելով ժողովրդին, Արովյանն ասում է. «Ուզածս էն ա, սիրելի ազգ, որ քեզ ծառայեմ, քեզ իմ կյանքս տամ, քանի շունչս բերանումս ա»։

Արովյանը հենց սկզբից ըմբռնեց, որ դաստիարակը ինքը պետք է դաստիարակված լինի, և անօրինակ համառությամբ ու ջանասիրությամբ հետամուտ եղավ իր կրթության գործին։ Սկզբում էջմիածնի վանքի դպրոցում, ապա Թիֆլիսի Ներսիսյան դպրոցում, իր սիրելի ուսուցիչ Ալամդարյանի մոտ, իսկ այնուհետև 1830—1836 թթ. Դորպատի (ներկայումս էստոնական ՍՍՌ Տարտու քաղաքը) համալսարանական միջավայրում, պրոֆեսոր Պարրոտի մոտ, Արովյանը բավմակողմանի կրթություն է ձեռք բերում, հիմնավորապես ծանոթանում եվրոպական և ռուսական կուլտուրայի նվաճումներին։ Իր բացառիկ աշխատասիրության և ընդունակության շնորհիվ նա սովորում է վեց լեզու։

1836 թվականին Արովյանը վերադառնում է հայրենիք՝ իր ձեռք բերած հարուստ գիտելիքները ժողովրդին հաղորդելու վառ հույսերով ու ցանկություններով լցված։ Բայց նրա հույսերը խորտակվում են, երբ կաթողիկոսը նրան, այդ ամենակրթված, առաջավոր մարդուն, ասում է. «Դու լավ կարող ես խմորել անմիտ երեխաների միտքը, նրանց կրթելը քո գործը չէ»։

Էջմիածնի խավարամոլ հոգևորականության կողմից հալածված ու լքված, Արովյանը անգործ, կիսաքաղց օրեր է անցկացնում Թիֆլիսում։ 1837 թվականին, կարիքից դրդված նա մտնում է պետական ծառայության՝ որպես Թիֆլիսի գավառական դպրոցի տեսչի պաշտոնատար և միաժամանակ պարապում մասնավոր դասերով։

1843 թվականին Արովյանը նշանակվում է Երևանի գավառական դպրոցի տեսուչ, որտեղ աշխատում է մինչև 1848 թվականը։ Այդ շրջանում նա իրեն ամբողջապես նվիրում է Երևանի գավառի դպրոցները քայքայված, հետամնաց վիճակից դուրս բերելու և նոր, գիտական-մանկավարժական հիմունքների վրա դնելու գործին։ Ժամանակակից Պերճ Պռոշյանի վկայությամբ, Արովյանը չտեսնված և լսված նորություններ է մտցնում Երևանի գավառի դպրոցական գործի մեջ և դրանով իսկ իր դեմ լարում ռեակցիոն չինովնիկներին ու հոգևորականներին։ 1848 թ. մարտին Արովյանն ազատվում է տեսչի պաշտոնից, իսկ ապրիլի 2-ին անհետանում, և այդպես էլ մինչև օրս չի պարզվում նրա կորուստը։

Արովյանը ջերմ հայրենասեր էր. «Ապրել և մեռնել հայրենիքի համար, սուրբ այն խնդիրը, որ ես ընտրել եմ պատանեկական տարիներից ի վեր».— ասում է նա։ Մեծ մանկավարժ էր, հումանիստ, որն իր կյանքի իմաստը, իր երջանկությունը տեսնում էր մանուկ սերնդի կրթության ու դաստիարակության մեջ։ «Մանուկներին կրթելը աշխարհիս երեսին ամեն բան է ինձ համար»։ «Ուսուցիչը պետք է սիրի աշակերտին այնպես, ինչպես հայրը որդուն»,— ասում է Արովյանը։ Արովյանը Անդրկովկասի ժողովուրդների բարեկամության ջերմ պաշտպաններից էր և անձամբ մտերմական կապեր ուներ ադրբեջանական նշանավոր գրող, լուսավորիչ Միրզա-Ֆաթալի Ախունդովի, բանաստեղծ Միրզա-Շաֆու և ուրիշների հետ։ Արովյանը ջերմորեն պաշտպանում

էր ռուս և հայ ժողովուրդների բարեկամության գաղափարը — հայ ժողովրդի ոսխտր անխզելիորեն կապում Ռուսաստանի հետ։

Իր բեղմնավոր մանկավարժական գործունեության հետ միաժամանակ Աբովյանը զբաղվել է նաև գրական ու գիտական աշխատանքներով։ Հայերեն, ռուսերեն և գերմաներեն լեզուներով նա գրել է բազմաթիվ աշխատություններ ու հոդվածներ, առաջին անգամ կազմել է՝ աշխարհաբար դասագրքեր։ Ջափազանց հարուստ է նրա թողած գրական ժառանգությունը, որը, սակայն, միայն սովետական կարգերում ըստ արժանվույն գնահատվեց և դարձավ ժողովրդի սեփականությունը։

Աբովյանը գրել է բանաստեղծություններ, պատմվածքներ, առակներ, պիեսներ։ Թարգմանություններ է կատարել Հոմերոսից, Գյոթեից, Շիլլերից, Կարամզինից, Կոլցովից, Դիմիտրևից, Խմնիցերից։ Անձամբ ծանոթ է եղել Ժուկովսկու հետ։

Աբովյանի ստեղծագործության թագն ու պսակը նրա հռչակավոր «Վերք Հայաստանի, ողր հայրենասիրի» պատմական վեպն է։

«Վերք Հայաստանի» վեպում գեղարվեստորեն վերարտադրված են 19-րդ դարի առաջին քառորդի պատմական անցքերը՝ հայ ժողովրդի ծանր, կոշմարային դրությունը պարսիկ խանների տիրապետության շրջանում, հայերի ազատագրական ձգտումներն ու հայ-ռուսական միացյալ կռիվները պարսկական զավթիչների դեմ, վեպի գլխավոր հերոս Աղասու սխրագործությունները, Երևանի գրավումը և այլն, և այլն։ Աբովյանն այստեղ հանդես է գալիս որպես չերմ հայրենասեր և դրվատում է Ռուսաստանի կատարած դրական դերը հայ ժողովրդին պարսկական դաժան լծից ազատագրելու գործում։ «Օրհնված լինի էն սհաթը,— ասում է Աբովյանը,— երբ ռուսները ոտք դրին մեր հայկական հողը և անիծյալ ղըզբաշին (պարսիկներին) դուրս քշեցին մեր հողից»։

«Վերք Հայաստանի» պատմական վեպի հիմնական մոտիվը հայրենասիրությունն է և ազատասիրությունը, հայրենիքը և ժողովուրդը օտար բռնակալների լծից ազատագրելու վեհ դաղափարը, որն Աբովյանը խտացրած կերպով արտահայտել է հետևյալ քառյակում.

«Վայ էն ազգին, որ աշխարհումս անտեր ա,
Վայ էն երկրին, որ թշնամու գերի ա,
Վայ էն խալխին, որ ինքն իր կյանքն, ազխարրր,
Չի պահպանիլ ու հարամու ձեռ կտա»։

Մի այլ տեղ Աբովյանը գրում է. «Շունչդ տուր, կյանքդ, բայց քո հայրենիք ոչ ոքի մի տուր»։

«Վերք Հայաստանի»-ն աշխարհաբար լեզվով գրված առաջին վեպն է հայ իրականության մեջ։